ԿՈՏԱՅՔ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
ձեռքբերումները 2007-2011 թվականներին

ՀՏԴ 330.12 (479.25)
ԳՄԴ 65.9 (2Հ) - 94
Կ 770

Կ 770 **Կոտայք: Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի ձեռքբերումները 2007-2011 թվականներին** / Տնտեսական բարեփոխումների վերլուծական - տեղեկատվական կենտրոն. Եր.: Տնտես. բարեփոխումների վերլուծ. - տեղեկատվական կենտրոն, 2012. - 68 էջ:

Սույն գրքույկը ներկայացնում է 2007-2011 թվականներին ՀՀ Կոտայքի մարզում առավել նկատելի ձեռքբերումները՝ տնտեսության և ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության և մշակույթի, բնակարանային ապահովության և հասարակական անվտանգության բնագավառներում, որոնց արդյունքում բարելավվել է քաղաքացիների կենսամակարդակը: Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերը, որոնց շնորհիվ մարզի տնտեսությունն ու հասարակությունը նշանակալի ձեռքբերումներ են ունեցել:

ՀՏԴ 330.12 (479.25)
ԳՄԴ 65.9 (2Հ) - 94

ISBN 978-9939-9065-0-8

© Տնտեսական բարեփոխումների վերլուծական - տեղեկատվական կենտրոն, 2012

Կազմին՝ Սեդրակ Առաքելյան, Գառնիի ձորը (1927)

Տպագրված է «ՍԱՄԱՐԿ» ՍՊԸ տպագրատանը
Տպաքանակը՝ 3000 օրինակ

Կոտայք

Հայաստանի Հանրապետության տասը մարզերից ինը սահմանամերձ են, և միայն մեկը՝ Կոտայքը, ապրում է երկրի սրտում՝ բոլոր ծեգերից քույր-եղբայրների մեջքով պարսպված: Իր Հրազդան կենտրոնով, վեց քաղաքներով ու վեց տասնյակ գյուղական համայնքներով ապրում է այբբենական կարգով Հայաստանի վեցերորդ մարզը՝ վեց տառով անվանակոչված Կոտայքը, հայոց հնագույն բնակվայրերից մեկը: Այստեղ, Աժդահակի, Թեժ ու Արա լեռների եռանկյունում, Գութանասարի, Հատիսի, Ծաղկունյաց ու Գեղամա լեռների փեշերին, Հրազդանի, Ազատի ու Մարմարիկի կիրճերում ու գեղատեսիլ հովիտներում, հողի ամեն մի թիզ հայ ժողովրդի պատմության հազարամյակների վկան է:

Կոտայքի քաղաքներն ու գյուղերը վեց հազար տարվա պատմություն ունեն և ծննդյան սեպագիր վկայականներ: Ժայռերն այստեղ հիշում են նախապատմական որսորդների պիրկ մատների հպումը, իսկ սրբատաշ քարերը՝ Արևին աղոթող սկայորդիների հոգու ջերմությունն ու մեհենական հուրը:

Փառավոր է Հայաստանի սիրտը. այստեղ տաճարները կարող են պատմել, թե ինչպես նոր հավատի դարձած հայը մեհյանի կողքին կանգնեցրեց եկեղեցի, բայց չդավեց հին աստվածներին: Ժայռից հավատ քամեց հայը Կոտայքում, և հավատի տաճար դարձավ ժայռն ու վիմափոր արցունքներ դարձան Լուսավորչի աղոթքն ու օրհնությունը: Արշակունյաց արքայական ոստանն ու իշխանական վեց՝ Պահլավունի, Մամիկոնյան, Զաքարյան, Օրբելյան Պռոշյան ու Վաչուտյան տոհմերի տիրակալության մարգարիտը հայ ժողովրդին վեց հոգևոր առաջնորդ պարգևեց:

Հզոր է Հայաստանի սիրտը, նրա ամեն մի կծկում սնել ու սնում է Հայաստանի տնտեսությունը: Սևան-Հրազդան կասկադի վեց՝ Լճային, Աթարբեկյանի, Գյումուշի, Արզնու, Քանաքեռի և Երևանի հիդրոէլեկտրակայանները տասնամյակներ շարունակ Հայոց երկրորդ հանրապետության տնտեսության էներգետիկ առանցքը եղան: Այսօր էլ Գյումուշ-ՀԷԿ-ը Հայաստանի ամենահզոր հիդրոէներգետիկ կայանն է ու շարունակում է երկրի էներգատար անոթներով օրնիբուն սնել տնտեսությունը, ջերմացնել ու լուսավորել հայի տունը: Հայոց զարկերակի՝ Հրազդանի ջրերը ոռոգում

են հայի արտերը. Հրազդանի ոռոգման վեց՝ Արտաշատի, Ստորին-Հրազդանի, Նորքի, Կոտայքի, Արզնի–Շամիրամի, Ալափարսի համակարգերը հագեցնում են Կոտայքի ու Արարատյան դաշտավայրի հազարավոր հեկտար հողատարածքների ծարավը: Կծկվում է Հայոց սիրտն ու ամեն կծկում Մաքրավանի, Արզնու, Ալափարսի, Արզականի, Կաթնաղբյուրի և Գառնու աղբյուրների ջուրը՝ ամենահամեղ ջուրը ողջ տարածաշրջանում, մղում է հայի տուն:

Առողջ է Հայաստանի սիրտը: Ծաղկաձորի, Հանքավանի, Արզնու, Աղվերանի, Աղավնաձորի ու Արզականի անտառների գրկում, գետերի ու աղբյուրների ափին հանգիստ են առնում հոգնատանջ հայի միտքը, մարմինն ու հոգին, ավյունով են լցվում երիտասարդները Թեղենիսի սլացքում, ու անհոգ խայտում են մանուկները Ծաղկունյաց լեռների կանաչում:

Բաբախում է Հայաստանի սիրտը՝ ինը եղբայրների ու քույրերի մարմնով պարսպված: Եվ Հայոց հուժկու սրտի ամեն հարված նոր ուժ է տալիս երկրի տնտեսությանն ու վստահություն՝ երկրի տիրոջը՝ մարդուն:

Մարդը

Կոտայքի բնակչության թվաքանակը 2004 թվականից հետևողականորեն աճել է: 2012 թվականի տարեսկզբին Կոտայքում բնակվում էր հանրապետության մարզերի բնակչության **ավելի քան տասներեք տոկոսը**: 2012 թվականի տարեսկզբին Կոտայքը Հայաստանում բնակչության թվով երկրորդ մարզն է:

Բնակչության թվաքանակը Կոտայքի մարզում (հազար մարդ)



2002 թվականից հետո տարեց-տարի աճել է Կոտայքի մարզում ծնվածների թվաքանակը: Ծնվածների թվով Կոտայքը Հայաստանում երկրորդ մարզն է: 2009 թվականին Կոտայքի մարզում ծնվել է **ավելի շատ երեխա**, քան վերջին տասնամյակի որևէ տարում:

2011 թվականի ընթացքում Կոտայքի մարզում ծնվել է 40 տոկոսով ավելի շատ երեխա, քան 2002 թվականին:

Կոտայքի մարզում բնակչության մահացությունն ավելի քան յոթ տոկոսով **ցածր է** հանրապետությունում մահացության միջին ցուցանիշից: Կոտայքի մարզում 1,000 բնակչի հաշվով մահերի թիվն **ամենացածրն է** հանրապետությունում՝ Գեղարքունիքից հետո:

Կոտայքի մարզում բնակչության բնական աճը ավելացել է 2002 թվականից





2002-2011 թվականներին Կոտայքի մարզում բնակչության բնական աճն ավելացել է շուրջ 80 տոկոսով:

սկսած. եթե 2002 թվականին Կոտայքում բնակչության թիվն ավելացել է շուրջ 900 հոգով, ապա 2011 թվականին՝ ավելի քան 1600 հոգով: 2011 թվականին Հայաստանի մարզերում բնակչության **բնական աճի շուրջ մեկ հինգերորդը բաժին է ընկնում Կոտայքին**. հանրապետության մարզերում բնական աճի թվաքանակով Կոտայքը երկրորդն է՝ Արմավիրից հետո: Հազար բնակչի հաշ-

վով Կոտայքի մարզում բնական աճը մեկ հինգերորդով ավելի է, քան միջինը հանրապետությունում և գրեթե նույնքան, որքան մայրաքաղաք Երևանում:

Բնական աճը Կոտայքի մարզում (մարդ)



2011 թվականին Կոտայքի մարզում ավելի շատ ընտանիք է կազմվել, քան 1998 թվականից ի վեր Հայաստանի որևէ մարզում:

2011 թվականին Կոտայքում կազմվել է **երկու անգամ ավելի շատ ընտանիք**, քան 2000 թվականին և մեկ երրորդով ավելի, քան 2005 թվականին: Հայաստանի մարզերում **յուրաքանչյուր վեցերորդ ամուսնություն գրանցվել է Կոտայքում**: Երիտասարդները Կոտայքի մարզում ակներևաբար ավելի մեծ վստահությամբ և հավատով են նայում ապագային, քան նախորդ տարիներին:

2011 թվականին հանրապետության մարզերում ամենամեծ թվով ամուսնություններ գրանցվել են Կոտայքում:

Ամուսնալուծությունների հարաբերությունն ամուսնությունների թվին 2011 թվականին Կոտայքում **երեք քառորդով պակաս էր**, քան Երևանում և շուրջ 40 տոկոսով պակաս, քան միջինը հանրապետությունում:

Տարեց-տարի **նվազել է** Կոտայքի մարզից մեկնող միգրանտների թիվը. եթե 1998 թվականին Հայաստանի մարզերից մեկնած միգրանտների ավելի քան

Ամուսնությունների թիվը Կոտայքի մարզում



Կոտայքի մարզից մեկնողների թվաքանակը (մարդ)



մեկ հինգերորդը մեկնել էր Կոտայքի մարզից, ապա 2007-2010 թվականներին Կոտայքից մեկնողները կազմել են հանրապետության մարզերից մեկնած միգրանտների շուրջ 11 տոկոսը: 2010 թվականին Կոտայքի մարզից մեկնել է **երկու անգամ պակաս** մարդ, քան 2003 թվականին:

Տնտեսության սյուները

Կոտայքը Հայաստանի դիվերսիֆիկացված **առավել հզոր արդյունաբերական հզորություններ ունեցող մարզն է.** արդյունաբերական արտադրանքի համախառն ծավալով 2011 թվականին Կոտայքի մարզը հանրապետությունում զիջում է միայն Սյունիքին:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը Կոտայքի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



Կոտայքի մարզում տարեց-տարի **առաջանցիկ տեմպով մեծացել է** արդյունաբերական արտադրանքի ծավալը, ընդ որում, եթե 1995-2002 թվականներին՝ ութ տարում, մարզում արդյունաբերական արտադրանքի ծավալն ընթացիկ գներով աճել է ընդամենը 9 տոկոսով՝ զիջելով նշված ժամանակահատվածում սղաճի գումարային ցուցանիշին, ապա 2003 թվականից սկսած Կոտայքի մարզում արդյունաբերական արտադրանքի ծավալի աճի տեմպերը կտրուկ բարձրացել են՝ նախաճգնաժամային 2007 թվականին և 2008 թվականի առաջին կիսամյակում **հասնելով տարեկան 16-18 տոկոսի**: 2008-2009 թվականներին ճգնաժամի հետևանքով Կոտայքի մարզում արդյունաբերական արտադրանքի ծավալը կտրուկ ընկել է, սակայն արդեն 2011 թվականին Կոտայքում արձա-

2011 թվականին Կոտայքի մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալն ավելացել է մեկ հինգերորդով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը ՀՀ մարզերում, 2011թ. (մլրդ. դրամ)



նագրվել է **աննախադեպ աճ**՝ 23 տոկոս: 2003-2011 թվականներին՝ ինը տարում, Կոտայքի մարզում արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը՝ ընթացիկ գներով, **գերազանցել է 80 տոկոսը**:

Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ծավալով Կոտայքը **գերազանցում է հանրապետության բոլոր մարզերին**, ընդ որում, 2011 թվականին Հայաստանի մարզերում Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ծավալի գրեթե 30 տոկոսը բաժին է ընկնում Կոտայքի

Կոտայքում է հանրապետության մարզերի ամենահզոր մշակող արդյունաբերությունը. 2011 թվականին հանրապետության մարզերում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալի մեկ քառորդն արտադրվել է Կոտայքում:

մարզին: 2010 թվականին Կոտայքի մարզում ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման ծավալները նախաճգնաժամային 2007 թվականի համեմատ ընթացիկ գներով **կրկնապատկվել են**:

Մշակող արդյունաբերությունը Կոտայքի մարզում հաջողությամբ հաղթահարել է ճգնաժամի մարտահրավերները. 2011 թվականին Կոտայքի մարզում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալն ընթացիկ գներով **գերա-**

զանցել է նախաճգնաժամային 2007 թվականի արտադրանքը **շուրջ վաթսուն տոկոսով**: 2011 թվականին Կոտայքի մարզում արդյունաբերական արտադրանքի ծավալը 25 տոկոսով ավելին էր, քան հանրապետության վեց մարզերում միասին:

2011 թվականին մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալն ընթացիկ գներով ավելին էր, քան 2001 թվականին Հայաստանի բոլոր մարզերում միասին:

Մշակող արտադրանքի ծավալը կոտայքի մարզում (մլրդ. դրամ)



Մշակող արտադրանքի ծավալը ՀՀ մարզերում, 2011թ. (մլրդ. դրամ)



Մեքենաների և սարքավորումների առանձին տեսակներ արտադրվում են **բացառապես** Կոտայքի մարզում:

2010 թվականին դեղագործական, ինչպես նաև կաշվի ու կաշվե արտադրատեսակներն **արտադրվել են բացառապես** Կոտայքում. 2010 թվականին Հայաստանում դեղագործական արտադրանքների արտադրության ծավալի շուրջ մեկ հինգերորդը և կաշվի ու կաշվե արտադրատեսակների տասներեք տոկոսից ավելին արտադրվել է Կոտայքի մարզում:

2010 թվականին հանրապետության մարզերում պատրաստի մետաղե արտադրատեսակների (բացի մեքենաներից և սարքավորանքից), ինչպես նաև ոչ մետաղական հանքային առանձին արտադրատեսակների արտադրության ծավալի կեսից ավելին արտադրվել է Կոտայքում:

Հանրապետության մարզերում ոսկերչական արտադրատեսակների ծավալի ավելի քան 40 տոկոսն արտադրվել է Կոտայքում:

2010 թվականին հանրապետության մարզերում արտադրված սննդամթերքի **մեկ հինգերորդը** և խմիչքների **մեկ երրորդից ավելին** արտադրվել է Կոտայքում: 2010 թվականին Կոտայքի մարզում սննդամթերքի և խմիչքների արտադրության ծավալն ընթացիկ գներով 2004 թվականի արտադրության ծավալի **կրկնապատիկն է**:

2010 թվականին հանրապետության մարզերում հիմնային մետաղների և էլեկտրական սարքավորումների արտադրություն ծավալի **մեկ վեցերորդը** նույնպես բաժին է ընկնում Կոտայքին:

«Ուզեցի բան մը ստեղծեմ, որ Կոտայքի մարզի աս շրջանը զարգացում մը արձանագրե: Եվ իմ օրինակիս թող հետևին բոլոր այդ շինարար հաստատությունները, որ կան: Թող գան, ստեղծեն, շենացնեն, հայկական երգն ու պարը մտնի այս շրջանին մեջ»:

Սեդրակ Աճեմյան, Ամերիկահայ գործարար

Ծնունդով մեղրաձորցի Արա Սմբատյանը Հրազդանի ջերմային էլեկտրակայանի հինգերորդ էներգաբլոկում կաթսայատուրբինային արտադրամասի հերթափոխի պետ է աշխատում: 2003 թվականին ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի մեքենաշինության և սարքաշինության բաժինը՝ ձեռք բերելով մեքենաշինության տեխնոլոգի մասնագիտություն: Ավարտելուց անմիջապես հետո աշխատանքի է անցել Հրազդան ՋԷԿ-ում: Նա այն ընտրյալների թվում էր, որոնցից կազմված խումբը 2009 թվականին ինն ամսյա վերապատրաստում անցավ Սանկտ Պետերբուրգում, այնուհետև մեկամսյա դասընթացներ՝ Մինսկում:

«Վերադարձից հետո հարկ եղավ տեղում ևս հանձնել քննություն, դրանից հետո նոր ինձ նշանակեցին հերթափոխի պետ, –պատմում է ծնունդով մեղրաձորցի 30-ամյա երիտասարդը: Սիրում եմ իմ աշխատանքը և, ճիշտն ասած, չեմ էլ պատկերացնում, թե որևէ այլ տեղ կկարողանայի աշխատել: Ամուսնացած եմ, ունեմ երեքամյա դուստր: Աշխատանքս բարձր է վարձատրվում, կարողանում եմ ընտանիքիս կարիքները հոգալ: Տարին մեկ անգամ կարողանում ենք ընտանիքիով որևէ տեղ գնալ հանգստանալ արձակուրդներին, իսկ անցած տարի մեկ ամսով Սիբիր գնացի: Ուզում էի շրջագայել, ուզում էի այդ վայրերում լինել, դրա համար էլ հենց Սիբիրն ընտրեցի: Իմ աշխատանքն ինձ հնարավորություն տալիս է հանգստանալու, իսկ դա կարծում եմ կարևոր հանգամանք է: Արդեն երկրորդ տարին է, որ Հրազդան ՋԷԿ-ում եմ ու հույս ունեմ, որ եմ դեռ երկար ժամանակ նրանց աշխատակիցը կլինեմ»:

Հրազդանի ջերմային էլեկտրակայանի հինգերորդ բլոկը սկսել է աշխատել լրիվ հզորությամբ



Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը և Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգալդյանը Սարանիստի ապակե տարաների գործարանում ծանոթանում են տեղադրված նորագույն արտադրական հզորություններին

2007-2011 թվականների ընթացքում Կոտայքում **կառուցվել, գործարկվել, վերազինվել և արդիականացվել են** մի շարք ձեռնարկություններ, ինչն էականորեն աշխուժացրել է մարզի տնտեսական կյանքը:

2012 թվականին **գործարկվեց** Հրազդան ջերմային էլեկտրակայանի հինգերորդ էներգաբլոկը: 2008-2011 թվականներին Կոտայքի մարզում կառուցվել է հինգ փոքր հիդրոէլեկտրակայան:

2010 թվականին **«Սարանիստ»** ընկերությունն ավարտեց արտադրական հզորությունների ընդլայնման ծրագիրը: Հնարավորություն ստեղծվեց թողարկելու Հայաստանում և տարածաշրջանում **աննախադեպ** կառուցվածքի տարաներ: Գործարանն ամբողջությամբ, ներառյալ՝ հումքի պատրաստման արտադրամասը, նոր վառարանը, ապակե տարաների արտադրման հոսքագիծը, փաթեթավորման հոսքագիծը, նախագծել և մոնտաժել են արտերկրի լավագույն կազմակերպություններն ու մասնագետները: Կառուցվել է շուրջ 65 տոննա տարողությամբ վառարան՝ օգտագործելով բարձրորակ հրակայուն աղյուս և այլ նյութեր, տեղադրվել է տարեկան շուրջ **15 միլիոն միավոր արտադրական հզորություն** ունեցող ապակե տարաների արտադրության հոսքագիծ, փաթեթավորման հոսքագիծ, հումքի պատրաստման արտադրամասի համար անհրաժեշտ սարքավորումներ: Նոր գործարանը սարքավորվել է նորագույն

լաբորատորիայով, ինչը բարձրորակ և մրցունակ արտադրանքի կարևոր երաշխիք է: Շահագործման է հանձնվել նաև **պոլիէթիլենային թաղանթի արտադրությունը**, որը կբավարարի փաթեթավորման նյութերի տեղական պահանջարկը՝ փոխարինելով ներմուծումը:

«Գլաս Ուորլդ Քամփնի» ընկերությունը **Բյուրեղավանում** հիմնել է ջրի շշալցման արտադրություն: Գործարանը նախագծվել է իտալական **SACME** ընկերության կողմից և համալրվել նույն ընկերության սարքավորումներով: Ընկերությունը ստեղծում է նաև ապակե տարաների խցանների, մետաղական «TWIST-OFF» կափարիչների, բարձրորակ պիտակների և փաթեթավորման նյութերի արտադրություն, որը հագեցվելու է իտալական նորագույն սարքավորումներով:

Կոտայքի մարզի **Արտավազ** համայնքի վարչական սահմանում ընդգրկված պետական անտառներից և անտառային հողերից շուրջ 150 հեկտար Հայաստանի Հանրապետության կառավարությունը պահպանության նպատակով, անհատույց (անժամկետ) օգտագործման իրավունքով տրամադրել է **«ԷՅ ընդ ԷՄ ՌԵՅՐ»** ընկերությանը, որը Արտավազ համայնքում շուրջ 100 հեկտար գյուղատնտեսական նշանակության հող է ձեռք բերել և կառուցում է **քաղցրահամ և հանքային ջրերի շշալցման գործարան**:

«Էկոտոմատո» ընկերությունը Կոտայքի մարզի **Գողթ** գյուղում հիմնել է

Բյուրեղավանի «Գլաս Ուարլդ» շշալցման արտադրամասը

վարդերի ջերմոցային տնտեսություն՝ կիրառելով հոլանդական **«Դալսեմ»** ընկերության ժամանակակից տեխնոլոգիաները:

2009 թվականին **Նոր Գեղի** համայնքում գործարկվել է **«Լորի»** ադամանդագործական ընկերությունը:

2009-2011 թվականներին Կոտայքի մարզում կառուցվել և գործարկվել է **«Մուլտի Ակվամարին»** գործարանը:

Մեքենան, թաղվելով ձյան մեջ, նեղլիկ ճանապարհով շարունակում է առաջ ընթանալ: Գողթում բացատրել էին, որ դա միակ տարբերակն է վարդաստան հասնելու համար: Երկրորդ ոլորապտույտից հետո, հանդիպակած թմբի հետևից, համատարած սպիտակ ֆոնին միանգամից գծագրվում է ջերմոցի արծաթավուն տաղավարը: Բավական ընդարձակ մի շինություն, որ ձգվում է երկու հեկտարի վրա: Դրսի ցուրտը միանգամից նահանջում է ներսի տաքության ու վարդերի բույրի ներքո:

Տասը անուն հոլանդական վարդ են աճեցնում «Էկոտոմատո» ՓԲ ընկերությանը պատկանող այս ջերմոցում: «Կարմիր» և «Սպիտակ» Նաոմիներին հաջորդում են իտալական Դոլոմիթի մարզի գեղեցկուհիները, որոնց հետևում են «Քաղցր շրթունքները», հերթը հանձնելով դեռ չբացված սևահերներին, ապա՝ գլխապտույտ առաջացնող բույրով օժտված սպիտակահերներին, որոնց շարքերը լրացնում են դեղին, վարդագույն, կարմիր ու նարնջի երանգների թերթերով վարդերը:

Ընկերության տնօրեն Արսեն Սանդոյանն ասում է, որ իրենց գեղեցկուհի հոլանդուհիներին հենց հոլանդական տեխնոլոգիայով էլ աճեցնում են: «Հայաստանում վարդ աճեցնում են, սակայն մեր կիրառած տեխնոլոգիան նորամուծություն է, այն մեր երկրում երբևէ չի կիրառվել: Ստանում ենք բարձր որակի վարդեր, որ հիմնականում արտահանում ենք՝ Ռուսաստանի Դաշնություն, Վրաստան, Հոլանդիա, Շվեդիա և այլն»,– ասում է տնօրենը:

Ընկերությունում 40 մարդ է աշխատում, 39-ը՝ Գողթ գյուղից, մեկը՝ Գառնիից: Գողթ գյուղի բնակչուհի, քսանութամյա Նաիրա Մովսիսյանն արդեն երեք ամիս է աշխատում է այստեղ ու անչափ գոհ է «ծաղկային» իր միջավայրից: Երկու անչափահաս երեխա ունի Նաիրան: Միայնակ մայր է: Նաիրան ասում է, որ վարդաստանում ծաղկաբույծի իր աշխատանքով կարողանում է որոշակի կենցաղային խնդիրներ լուծել, ընտանքի կարիքները հոգալ: «Բացի դրանից, անչափ հաճելի է այստեղ աշխատելը,– ասում է Նաիրան,- երբ մուտքից ոտքդ ներս ես դնում, լրիվ կտրվում ես իրականությունից, մոռանում ես անգամ ժամանակը: Ծաղիկները նաև հանգստություն են պարգևում ու, այսքան գեղեցկուհիների կողքին, ինքդ էլ ակամայից ձգտում ես միշտ «ֆորմի» մեջ լինել»:

Կոտայքի մարզում տարեց-տարի ավելացել են պտղի և հատապտղի տնկարկների տարածությունները. 2010 թվականին 2000 թվականի համեմատ Կոտայքի մարզում պտղի և հատապտղի տնկարկների տարածություններն **ավելացել են մեկ երրորդով**:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը Կոտայքի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



Կոտայքի մարզում անասնաբուծության համախառն արտադրանքը 2010 թվականին 2002 թվականի համեմատ ավելացել է շուրջ մեկուկես անգամ:

Անասնաբուծության ծավալները ՀՀ մարզերում, 2011թ. (մլրդ. դրամ)



2010 թվականին հանրապետությունում անասնաբուծության համախառն արտադրանքի շուրջ տասնմեկ տոկոսը բաժին է ընկնում Կոտայքի մարզին:

2011 թվականին 2000 թվականի համեմատ Կոտայքի մարզում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն **ավելացել է մեկ հինգերորդով**:

Խոզերի գլխաքանակը Կոտայքի մարզում աճել է ընդհուպ մինչև 2008 թվականի համաճարակն ու դրա հետևանքով գլխաքանակի անկումը: Այդուհանդերձ, խոզերի գլխաքանակը Կոտայքի մարզում աստիճանականորեն վերականգնվում է և արդեն 2011 թվականին այն Կոտայքի մարզում **գերազանցում էր** նախաճգնաժամային 2005 թվականի ցուցանիշը շուրջ մեկ երրորդով:

2011 թվականին հանրապետությունում խոզերի ամենամեծ գլխաքանակը, Արմավիրից հետո, Կոտայքի մարզում էր:



Կոտայքի մարզում անասնաբուծությունն ակներևաբար հաղթահարում է ճգնաժամի և համաճարակի հետևանքները. արդեն 2011 թվականին իրացվել է անասունի և թռչնի **ավելի շատ** միս, քան նախաճգնաժամային՝ 2006 թվականին:

2007-2011 թվականներին Հայաստանում ոռոգման համակարգերի կառուցմանը և վերականգնմանը 2 ուղղված կապիտալ ներդրումների 15 տոկոսից ավելին հատկացվել է Կոտայքի մարզին:

Ոռոգման համակարգերի կառուցմանն ու վերականգնմանն են ուղղվել Կոտայքի մարզում կատարված կապիտալ ներդրումների շուրջ մեկ հինգերորդը. Կոտայքի շուրջ 30 համայնքներում հիմնանորոգվել, վերակառուցվել ու վերականգնվել են ոռոգման համակարգեր, կառուցվել են ոռոգման ջրագծեր ու ներքին ցանցեր, երրորդ կարգի ջրանցքներ և կոլեկտորներ:

2010 թվականին **Գառնիում** գործարկվել է **«Յոթնաղբյուր-Գառնի»** ինքնահոս ջրատարը:

Եղվարդի շուրջ ութ կիլոմետր երկարությամբ երրորդ կարգի ջրանցքի վերականգնման արդյունքում համայնքի ոռոգելի հողատարածքների ընդհանուր մակերեսը **կրկնապատկվել է**:

2011 թվականին ավարտվել են **Մարմարիկի** ջրամբարի շինարարական աշխատանքները, ինչը թույլ է տալիս ջրամբարում կուտակել շուրջ **24 միլիոն խորանարդ** մետր լրացուցիչ ինքնահոս ջրաքանակ, որով հնարավոր է լրացուցիչ ոռոգել ավելի քան հազար հեկտար:

Ստորին Հրազդան ջրանցքի 5.3 կիլոմետր երկարությամբ հատվածի վերանորոգումը կավարտվի 2013 թվականի հունիսին:

2007-2011 թվականներին Կոտայքի մարզում ներդրվել և կիրառվում են գյուղատնտեսության մի շարք նոր տեխնոլոգիաներ և մեթոդներ: 2010 թվականին Կոտայքի մարզի **Կամարիս, Ձորաղբյուր, Բուժական, Աղավնաձոր, Լեռնանիստ, Նոր Արտամետ** համայնքներում ստեղծվել են փորձացուցադրական արտադրամասեր: Դրանց արդյունքներին հետևելով՝ մի շարք համայնքներում հողօգտագործողների կողմից մշակվում են ոչ ավանդական, ինչպես նաև մոռացված մշակաբույսեր. **Քաղսի, Լեռնանիստ, Բուժական** համայնքներում արդեն կան սիսեռի ցանքեր, լայն տարածում է գտել կանաչ ոլոռի կանադական կանգուն սորտը, մարզում մշակվում է կարմրագլուխ կաղամբ, բրոկոլի: Բազմաթիվ այգետերեր կիրառում են պտղատու ծառերի պալմետային ձևավորման եղանակը: **Նոր Գեղի, Ձորաղբյուր, Կամարիս, Գողթ** համայնքներում

հիմնվել են տարբեր պտղատու ծառերի ինտենսիվ ցրտադիմացկուն սորտերի տնկարաններ: **Աղավնաձոր, Ջրառատ, Կամարիս, Բուժական** համայնքներում աճեցվում են կարտոֆիլի տնկանյութի և կաղամբի սածիլներ: **Գողթ** համայնքի կաղամբի, կարտոֆիլի, լոբու ցանքերում կիրառվել են տեղական արտադրության կենսապարարտանյութեր:

2010-2011 թվականներին Հայաստանի Հանրապետության կառավարությունը Կոտայքի մարզի համայնքների գյուղացիական տնտեսություններին անհատույց տրամադրել է ավելի քան մեկ տոննա ցինկի ֆոսֆիդ՝ ավելի քան **9,000 հեկտարի** վրա մկնանման կրծողների դեմ պայքարելու նպատակով:

2010-2011 թվականներին Կոտայքի մարզի **տասներեք համայնքներում** տնկվել է շուրջ **15,000 ծառ և թուփ, Թեղենիք, Գետամեջ** և **Քասախ** համայնքներում տնկվել են **16,000 հացենի, թխկի, կաղնի** և **կենսածառ**:

Միայն 2011 թվականին, գարնանացանին աջակցելու նպատակով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը Կոտայքի մարզի գյուղացիական տնտեսություններին հատկացրել է ավելի քան **100 տոննա գարնանացան գարու սերմացու**, որից 66 տոննան՝ էլիտար:

Կոտայքի մարզում զարգանում է մեղվաբուծությունը. միայն 2010-2011 թվականներին մեղվաընտանիքների թիվը Կոտայքում **ավելացել է 10 տոկոսով**:

Կոտայքի մարզում 2009-2010 թվականներին **աննախադեպ կերպով մեծացել են** շինարարության ծավալները: 2010 թվականին շինարարության ծավալով Կոտայքի մարզը զիջում է միայն մայրաքաղաք Երևանին և Սյունիքի մարզին:

2011 թվականին Կոտայքի մարզում շինարարության ծավալն ընթացիկ գներով 2007 թվականի շինարարության ծավալի քառապատիկն է և 2002 թվականի իննապատիկը:

Շինարարության ծավալները Կոտայքի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



Շինարարության ծավալները ՀՀ մարզերում, 2011թ. (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



2010 թվականին հանրապետության մարզերում ամենամեծ ծավալով շինմոնտաժային աշխատանքներն իրականացվել են Կոտայքի մարզում:

2010 թվականին Կոտայքի մարզում շինմոնտաժային աշխատանքների ծավալն ընթացիկ գներով 2007 թվականի ծավալի **քառապատիկն է** և 2002 թվականին իրականացված շինմոնտաժային աշխատանքների ծավալի **ավելի քան ինն ապատիկը**:

2010 թվականին Կոտայքում իրականացվել են ընթացիկ գներով ավելի մեծ ծավալի շինմոնտաժային աշխատանքներ, քան 2000 թվականին հանրապետության բոլոր մարզերում միասին:

Շինմոնտաժային աշխատանքների ծավալը Կոտայքի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



2010 թվականին Կոտայքի մարզում շահագործման հանձնված բնակելի շենքերի մակերեսի **90 տոկոսը** գործարկվել է բնակչության ֆինանսավորմամբ, և միայն 10 տոկոսը՝ մարդասիրական օգնության միջոցների հաշվին՝ փախստականների համար բնակարանների կառուցման ծրագրերի շրջանակներում: 2010 թվականին բնակչության միջոցներով Կոտայքի մարզում շահագործման

2010 թվականին Կոտայքի մարզում շահագործման է հանձնվել եռապատիկ ավելի մեծ մակերեսով բնակելի շենք, քան նախաճգնաժամային 2006 թվականին:

է հանձնվել բնակելի շենքերի **ավելի մեծ մակերես,** քան հանրապետության որևէ այլ մարզում:

Հանրապետության մարզերում 2011 թվականին մանրածախ առևտրի **ամենամեծ թվով օբյեկտներ** գործել են Կոտայքում: 2011 թվականին Կոտայքի մարզում գործում էր մեկ քառորդով ավելի շատ մանրածախ առևտրի օբյեկտ, քան 2006 թվականին:

2011 թվականին հանրապետության մարզերում մանրածախ առևտրի օբյեկտների շուրջ մեկ հինգերորդը գործել է Կոտայքի մարզում:

Մանրածախ առևտրի շրջանառությունը Կոտայքի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



2011 թվականին Կոտայքի մարզում մանրածախ առևտրի շրջանառությունը **մեկուկես անգամ** գերազանցել է 2006 թվականի շրջանառությանը: 2011 թվականին Կոտայքի մարզում մանրածախ առևտրի շրջանառությունը 1998

Կոտայքի մասնաբաժինը ՀՀ մարզերում գտնվող մանրածախ առևտրի օբյեկտների ընդհանուր քանակում



թվականի **կրկնապատիկն է**: 2011 թվականին հանրապետության մարզերում մանրածախ առևտրի ամենամեծ շրջանառությունը Շիրակից հետո Կոտայքի մարզում էր:

Տարեց-տարի Կոտայքի մարզում **ավելացել է** խանութների թիվը. 2011 թվականին Կոտայքում գործել է երեք անգամ ավելի շատ խանութ քան 2002 թվականին և կրկնապատիկ ավելի, քան 2006 թվականին: 2011 թվականին Կոտայքում, Արարատից հետո, գործել են **ամենամեծ թվով խանութները**:

2011 թվականին Կոտայքի մարզում խանութների շրջանառության ընդհանուր ծավալը 2007-2008 թվականների խանութների ընդհանուր միջին շրջանառության կրկնապատիկն է:

Կոտայքում աստիճանականորեն **մեծացել է** նաև խանութների շրջանառությունը: 2011 թվականին 2004 թվականի համեմատ Կոտայքի մարզում խանութների շրջանառությունն ավելացել է ավելի քան երեքուկես անգամ:

Հայաստանի մարզերի բնակչության մեկ շնչի հաշվով առևտրի շրջանառությունը ամենամեծն է Կոտայքում:

Խանութների քանակը (միավոր) և դրանցում իրականացված շրջանառությունը (մլն. դրամ) Կոտայքի մարզում



2010 թվականին Կոտայքի մարզում բնակչության մեկ շնչի հաշվով առևտրի շրջանառությունն ավելի էր, քան հարևան Վրաստանում:

2011 թվականին Կոտայքի մարզում **աննախադեպ** ծավալներ են գրանցվել ծառայությունների ոլորտում՝ **շուրջ 26.3 միլիարդ դրամ**, ավելի, քան Հայաստանի Հանրապետության որևէ մարզում երբևէ: 2011 թվականին հան-

Մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը 2011թ. (հազ. դրամ)



2011 թվականին Կոտայքի մարզում ծառայությունների ծավալը 2008 թվականի կրկնապատիկն է, 2007 թվականի՝ եռապատիկն ու 2003 թվականի քառապատիկը:

ռապետության մարզերում ծառայությունների ծավալի ավելի քան մեկ հինգերորդն իրականացվել է Կոտայքում:

Ծառայությունների ծավալը Կոտայքի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



Միջին հաշվով բնակչության մեկ շնչին ընկնող ծառայությունների ծավալը Կոտայքի մարզում 2011 թվականին 2010 թվականի համեմատ ավելացել է **անախադեպ տեմպով՝ գրեթե մեկ քառորդով մեկ տարում**: 2009 թվականի համեմատ բնակչության մեկ շնչին ընկնող ծառայությունների ծավալը Կոտայքի մարզում **ավելացել է գրեթե մեկուկես անգամ**:

2011 թվականին հանրապետության մարզերում բնակչության մեկ շնչին ընկնող ծառայությունների ծավալը ամենամեծն էր Կոտայքում:

2010 թվականին հանրապետության մարզերում մատուցված մշակույթի, զվարճությունների և հանգստի ծառայությունների ծավալում յուրաքանչյուր

երեք դրամից երկուսը բաժին է ընկնում Կոտայքին: 2009-2011 թվականներին մշակույթի, զվարճությունների և հանգստի ծառայությունների ծավալները Կոտայքի մարզում գերազանցել է հանրապետության բոլոր մարզերի ծավալները միասին:

Մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտում ՀՀ մարզերում իրականացված ծախսերում Կոտայքի մասնաբաժինը, 2010թ.



Տեղեկատվության և կապի ծառայությունների ծավալով Կոտայքը հանրապետության **լավագույն մարզերի եռյակում է**: Միայն 2010 թվականին 2009 թվականի համեմատությամբ Կոտայքի մարզում տեղեկատվության և կապի ծառայությունների ծավալն **ավելացել է շուրջ 90 տոկոսով**:

Հանրապետություն այցելող զբոսաշրջիկների շուրջ երեք քառորդն այցելում է Կոտայք:

Կոտայքում են տեղակայված առողջարանների հիմնական մասը՝ **Ծաղկաձոր**, **Հանքավան**, **Արզնի**: 2008 թվականին Ծաղկաձոր քաղաքում ճոպանուղիների, դահուկուղիների, հյուրանոցների և հանգստյան գոտիների կառուցման շնորհիվ տարեկան **30 տոկոսով** ավելանում է զբոսաշրջիկների թիվը:

2010 թվականին **Գառնի** համայնքում գործարկվել է զբոսաշրջության տեղեկատվական նոր կենտրոն:

Մաղաքյանների սպորտային ընտանիքը Վանաձորից ամեն տարի գալիս է Ծաղկաձոր հանգստանալու: Ընտանիքի 45-ամյա ղեկավար Արսեն Մաղաքյանն ըմբշամարտիկ է: 1983-84 թվականներին Հայաստանի ըմբշամարտի առաջնություններն ավարտել է հաղթանակով: Տարիների հետ սպորտային ուղղվածությունը փոխվել է՝ սիրահարվել է լեռնադահուկային սպորտաձևին: Արսենի ասելով՝ մեղավորն իր երեխաներն են ու եղբայրը, ով մարզում է վանաձորցի լեռնադահուկորդներին, իսկ աղջիկը Հայաստանի չեմպիոնն է նույն մարզաձևից:

Արսեն Մաղաքյանն ասում է, որ հարազատների և ընկերների շրջանում ծաղկաձորյան այցերը ավանդույթի պես մի բան են դարձել: Յոթ-ութ տարի է, ամեն տարի գալիս են սեզոնի բացում ու փակում են անում: Երեխաներն այս ընթացքում հանգստանում են Ծաղկաձորում, իսկ ինքն ամեն օր գնում-գալիս է ու բացարձակ չի ձանձրանում կամ դժվարանում:

«Տղաս ու երկու աղջիներս ևս զբաղվում են այս սպորտաձևով, դահուկ են քշում, դե ես էլ որոշեցի նրանցից հետ չմնալ,– ծիծաղում է Արսեն Մաղաքյանը,– հինգ-վեց օր է այստեղ ենք, գալիս ենք հարազատներով, ընկերներով: Տարվա մեջ, եթե սուտ չասեմ, յոթ-ութ անգամ Ծաղկաձոր ենք գալիս: Պարզապես սիրահարված ենք Ծաղկաձորին: Մենակ մենք չենք, ռուսներն էլ են շատ գալիս Ծաղկաձոր, դահուկ են քշում, ճոպանուղի են նստում: Կարելի է ասել ողջ տարվա համար ադրենալին ենք ստանում, դրական էներգիա, որ մեր հետ տանում ենք: Ու էս ամեն ինչի համար էլ շատ թանկ չենք վճարում: Մատչելի է ամեն ինչը: Աշխատողն աշխատում է, ստեղծում՝ վայելում»:



Ծաղկաձորի ճոպանուղին դարձել է ձմեռային տուրիզմի սիրահարների սիրելի վայրը

«Ռոսիա» հյուրանոցային համալիրը կառուցված է միջազգային բարձրագույն չափանիշներին համապատասխան

2010 թվականից **Ծաղկաձորում** գործում է միջազգային բարձր չափանիշներին համապատասխանող և «Հայլոթ» հյուրանոցի ոճով կառուցված **«Ռոսիա»** հյուրանոցային համալիրը, որը հյուրերին սպասարկում է, թե՛ հյուրանոցի, թե՛ մարզի տարածքում: Հյուրանոցում գործում են բարձրակարգ բանակցությունների սրահ, լողավազան, մարզասրահ, լաունջ բար, կինոսրահ, մանկական սրահ՝ ուր երեխաներին հետևում է հմուտ դայակը, կահավորված խաղասենյակ, երեխաների զվարճանքների արդիական սարքավորմամբ հագեցված սրահ, շոգեբաղնիք:

2011 թվականին «Հանքավան» հանգստյան գոտում բացվեց **«Անի Ռեզորթ»** ժամանակակից հյուրանոցային համալիրը, որն ունի **40 սենյակ, 12 քոթեջ**՝ նախատեսված ավելի քան **140 հանգստացողի** համար: Հանգստյան տան տարածքում գործում են նաև ֆուտբոլի, վոլեյբոլի, թենիսի խաղադաշտեր, լողավազան, մարզասրահ, խաղասրահ, սահադաշտ և դահուկային վազքուղի:

2011 թվականին **Հրազդան** քաղաքի միկրոշրջանում բացվեց **ՎՏԲ-Հայաստան բանկի** մասնաճյուղը, որը հագեցած է ժամանակակից համակարգչային տեխնիկայով, հատուկ սարքավորումներով, գրասենյակային կահույքով և բոլոր անհրաժեշտ հաղորդակցման միջոցներով: Նոր մասնաճյուղը տարեկան սպասարկում է շուրջ **35,000 հաճախորդի**՝ տրամադրելով բանկային ծառայությունների ամբողջական փաթեթ՝ ավանդների բացում, դրամական փոխանցումներ, սպառողական, հիփոթեքային վարկեր, ավտովարկեր, բիզնես վարկեր:

«Անի Ռեզորթ» հյուրանոցային համալիրը

2012 թվականին Ծաղկաձորում մեկնարկել է արդեն ավանդական դարձած **«Կամուրջ»** իններորդ միջազգային տնտեսական համաժողովը, որը մասնագետները անվանում են նաև **«Հայկական Դավոս»**՝ 300-ից ավելի արդյունաբերողների, գործարարների, կառավարության ներկայացուցիչների, գիտնականների և հասարակական գործիչների մասնակցությամբ:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով Կոտայքի մարզում նվազել է արտահանման ծավալը: Այդուհանդերձ, 2011 թվականից սկսած, աճի միտումը վերականգնվել է. 2011 թվականին 2010 թվականի համեմատ արտահանման ծավալը կրկնապատկվել է, ինչն աննախադեպ է: 2010 թվականին Կոտայքի մարզից արտահանման ծավալը գերազանցել է հարևան Թուրքիայի մի շարք նահանգներից արտահանումը, այդ թվում՝ Բաթման, Էրզրում, Էլազիգ, Ամասիա և տաս այլ նահանգներից յուրաքանչյուրում:

2010 թվականին Կոտայքի մարզում արտահանման ծավալը գերազանցել է հարևան Թուրքիայի սահմանամերձ ինը՝ Կարս, Թունջելի, Երզինջան (Երզնկա), Բայբուրթ (Բաբերդ), Արդահան, Բիթլիս, Բինգյոլ, Մուշ և Վան նահանգների արտահաման ծավալները միասին:

Ենթակառուցվածքները

Կոտայքի մարզում 2011 թվականին գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը **մեկ երրորդով ավելի էր**, քան 2005 թվականին: 2011 թվականին Կոտայքի մարզի քաղաքային համայնքներում գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը 2002 թվականի համեմատ **շուրջ երեք քառորդով ավելի էր**:

Գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը Կոտայքի մարզում (կմ)



2010 թվականին Կոտայքի մարզում գազաֆիկացված էր քառապատիկ ավելի շատ բնակարան և բնակելի տուն, քան 2002 թվականին և կրկնակի ավելի, քան 2004 թվականին:

2010 թվականին գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների թվով Կոտայքի մարզը **երրորդն է** հանրապետությունում՝ մայրաքաղաք Երևանից և Լոռուց հետո:

2002 թվականին Կոտայքում բնակարանների և բնակելի տների 80 տոկո-

Երևանից հետո գազաֆիկացման ամենաբարձր ցուցանիշը Հայաստանում Կոտայքի մարզում է:

Գազաֆիկացված բնակարանների և բնակելի տնե-
րի քանակը Կոտայքի մարզում (միավոր)



սը գազաֆիկացված **չէր**, մինչդեռ 2010 թվականին արդեն գազաֆիկացվել **էր** բնակարանների և բնակելի տների **ավելի քան 80 տոկոսը**:

**2010 թվականին Կոտայքի մարզի գյուղական համայնքնե-
րում գազաֆիկացված էր երկու անգամ ավելի շատ բնա-
կարան և բնակելի տուն, քան 2003 թվականին:**

2002 թվականին Կոտայքի գյուղական համայնքներում գազաֆիկացված **չէր** բնակարանների և բնակելի տների ավելի քան 60 տոկոսը, մինչդեռ 2010 թվականին արդեն գազաֆիկացվել **է** մարզի գյուղական համայնքների բնակարանների և բնակելի տների **շուրջ 90 տոկոսը՝ ավելին, քան հանրապետության որևէ մարզում:**

2010 թվականին սպառողներին մատակարարված գազի ծավալով Կոտայքի

**2010 թվականին Կոտայքի մարզի քաղաքային համայնք-
ներում գազաֆիկացված էր յոթ անգամ ավելի բնակա-
րան և բնակելի տուն, քան 2002 թվականին և երկու-
սուկես անգամ ավելի, քան 2004 թվականին:**

2010 թվականին Կոտայքի մարզում սպառողներին մատակարարվել է գրեթե նույնքան ծավալի գազ, որքան հանրապետության վեց մարզերում միասին:

մարզը Հայաստանում զիջում է միայն մայրաքաղաք Երևանին: 2010 թվականին հանրապետության մարզերի քաղաքային համայնքներում սպառողներին մատակարարված գազի **մեկ երրորդը** սպառվել է Կոտայքի մարզում:

Կոտայքի մասնաբաժինը ՀՀ մարզերում բոլոր սպառողներին բաց թողնված գազի ընդհանուր ծավալում, 2010թ.



Կոտայքի մարզում ջրամատակարարման համակարգերի բարելավման, հաշվառման և կառավարման արդիական համակարգերի ներդրման արդյունքում զգալիորեն նվազել են կորուստները: 2010 թվականին Կոտայքի մարզում սպառողներին բաց է թողնվել **երկու անգամ** պակաս ջուր, քան 2003 թվականին:

2010 թվականին Կոտայքի մարզում կոյուղու համակարգի միագիծ երկարությունը գրեթե **նույնքան էր**, որքան մայրաքաղաք Երևանում:

Հանրապետության մարզերում կոյուղու համակարգի միագիծ ամենամեծ երկարությունը Կոտայքի մարզում է:

Կոտայքի մասնաբաժինը ՀՀ մարզերի կոյուղու համակարգի միագիծ ընդհանուր երկարության մեջ, 2010թ.



2010 թվականին Կոտայքի մարզում կոյուղու համակարգի միագիծ երկարությունը 2007 թվականի համեմատ **ավելացել է երեք քառորդով**՝ ավելին, քան հանրապետության որևէ մարզում կամ մայրաքաղաք Երևանում:

Հանրապետության մարզերում քաղաքների փողոցների և անցումների **ամենամեծ երկարությունը** Կոտայքում է՝ շուրջ 500 կիլոմետր: Կոտայքում է նաև հանրապետության մարզերում քաղաքների փողոցների, անցումների և հրապարակների ընդհանուր մակերեսի շուրջ մեկ քառորդը՝ **ամենամեծը մարզերում**:

Քաղաքների փողոցների, անցումների ընդհանուր երկարությունն՝ ըստ ՀՀ մարզերի, 2010թ.



Կոտայքի մարզում տարեց-տարի ավելացել է քաղաքների փողոցների, անցումների և հրապարակների ընհանուր մակերեսը. 2010 թվականին Կոտայքի մարզում քաղաքների փողոցների, անցումների և հրապարակների ընհանուր մակերեսը **մեկ քառորդով ավելի էր**, քան 2001 թվականին:

2010 թվականին հանրապետության մարզերի քաղաքների բարեկարգված փողոցների, անցումների և հրապարակների ամենամեծ երկարությունն ու ամենամեծ մակերեսը՝ գրեթե մեկ հինգերորդը, Կոտայքի մարզում է:

Կոտայքի մարզում 2007-2010 թվականներին՝ չորս տարում, ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվել են **ավելի մեծ ընդհանուր ծավալով բեռներ**, քան 2000-2006 թվականներին՝ յոթ տարում: 2010 թվականին Կոտայքի մարզում ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվել են երկու անգամ ավելի շատ բեռներ, քան 2004 թվականին:

Կոտայքի մարզում տարեց-տարի ավելացել է նաև բեռնաշրջանառությունը. 2010 թվականին Կոտայքի մարզում բեռնաշրջանառությունը **3.7 անգամ ավելի էր**, քան 2004 թվականին:

Կոտայքի մարզում աստիճանականորեն ավելացել է նաև ուղևորաշրջանառությունը: 2010 թվականին հանրապետության մարզերում ամենամեծ ուղևո-

Ավտոմոբիլային բեռնափոխադրումների ծավալը (հազ. տոննա)



ոաշրջանառությունը Կոտայքի մարզում էր, ընդ որում, Կոտայքի մարզին է բաժին ընկնում հանրապետության մարզերում ուղևորաշրջանառության շուրջ մեկ հինգերորդը:

2010 թվականին Կոտայքի մարզում ուղևորաշրջանառությունը 2004 թվականի կրկնապատիկն է, իսկ 2002 թվականի՝ ավելի քան քառապատիկը:

2007-2011 թվականներին Կոտայքի մարզում կատարված կապիտալ ներդրումների ավելի քան **մեկ վեցերորդը** ուղղվել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավմանը. նշված ժամանակահատվածում Կոտայքի մարզի հինգ քաղաքային և երեսունվեց գյուղական համայնքներում հիմնանորոգվել և վերակառուցվել են ջրամատակարարման արտաքին և ներքին ցանցեր, ընդ որում, ներդրումների **ավելի քան 80 տոկոսը** կատարվել է 2010-2011 թվականներին:

Կոտայքի մարզում 2007-2011թթ. իրականացված կապիտալ ծախսերի ընդհանուր ծավալում ջրամատակարարմանն ու ջրահեռացմանն ուղղված ծախսերի բաժինը



2008-2011 թվականներին բարելավվել են **Հրազդան, Աբովյան** և **Չարենցավան** քաղաքների ջրամատակարարման համակարգերը: Միայն 2011 թվականին Կոտայքի մարզում կառուցվել է **ավելի քան 200 կիլոմետր խմելու ջրագիծ**, **7 կիլոմետր կոյուղատար**, **150 խորանարդ մետր տարողությամբ**

կարգավորող ջրավազան, պոմպակայան, **Հրազդան** քաղաքում ամբողջությամբ վերակառուցվել է **Մաքրավանի** կենտրոնական պոմպակայանը, ավարտվել է **Գեղաշեն** համայնքի մայր ջրատարի կառուցումը, **Կապուտան** համայնքում կառուցվել է ջրամատակարարման նոր համակարգ: **Հացավան, Ողջաբերդ** և **Գեղադիր** համայնքներում ջրամատակարարման համակարգերի բարելավման արդյունքում ապահովվել է անխափան ջրամատակարարում:

2010-2011 թվականների ընթացում կատարված ներդրումների շնորհիվ Կոտայքի մարզում ջրամատակարարման միջին տևողությունը 6 ժամից հասել է **11-ի**: 2011 թվականին Հրազդան քաղաքի խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցման արդյունքում հրազդանցիներն այժմ օգտվում են 17-18 ժամյա ջրամատակարարումից՝ նախկին 11 ժամի փոխարեն:

2007-2011 թվականներին Կոտայքի մարզի **չորս քաղաքային** և **15 գյուղական** համայնքներում իրականացվել են գազաֆիկացման էական աշխատանքներ: Միայն 2011 թվականին գազաֆիկացվել է **Զովաշեն** համայնքը, կառուցվել է երեքուկես կիլոմետր երկարությամբ գազատար, որից օգտվում է ավելի քան **500 ընտանիք**: 2012 թվականի տարեսկզբին Կոտայքի մարզի 67 համայնքներից գազաֆիկացվել է **62-ը**:

2007-2011 թվականներին Կոտայքի մարզում իրականացվել են ճանապարհաշինական մեծածավալ աշխատանքներ. նշված ժամանակահատվածում հանրապետությունում ճանապարհաշինարարության կապիտալ ծրագրերի ծավալի տասը տոկոսն ուղղվել է Կոտայքի մարզի ճանապարհների բարելավմանը: 2007-2011 թվականներին Կոտայքի մարզում կատարված կապիտալ ներդրումների մեկ վեցերորդը հատկացվել է ավտոմոբիլային ճանապարհների կառուցմանն ու հիմնանորոգմանը. ճանապարհների և փողոցների հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել Կոտայքի ավելի քան 20 համայնքներում:

Միայն 2011 թվականին շահագործման են հանձնվել **Փյունիկ-Հանքավան՝** 13 կիլոմետր, **Զորավան-Արագյուղ՝** 6 կիլոմետր, **Երևան-Եղվարդ՝** 8 կիլոմետր, **Բուժական-Սարալանջ՝** 9 կմ, **Զովունի–Մրգաշեն՝** 8.5 կիլոմետր. **Բալահովիտ-Մայակովսկի-Արամուս-Կաթնաղբյուր-Զառ-Սևաբերդ՝** 16.5



Չարենցի կամարը

կիլոմետր ճանապարհահատվածները՝ 61 կիլոմետր ընդհանուր երկարությամբ: Ճանապարհաշինական աշխատանքներ են իրականացվել Ծաղկաձորի մարզահամալիր տանող ավտոճանապարհի **Քաղսի-Հրազդան** հատվածում, կարգավորվել են **Երևան-Գառնի-Գեղարդ** ճանապարհի նստվածքային հատվածները, նորոգվել է **Արզական-Աղվերան** ճանապարհ կամուրջը, **Ողջաբերդ** համայնքում հիմնանորոգվել է **Չարենցի կամարը**:

Կոտայքում ներմարզային երթուղիներով ավտոբուսային կապ է ապահովվում համայնքների **95 տոկոսի հետ**, ներմարզային երթուղիներով օրական կատարվում է շուրջ 350 երթ:

2010 թվականից Կոտայքի մարզի **Եղվարդ** քաղաքում գործարկվել է **«Արմենթել»** ընկերության Hi-Line ծառայությունը:

2011 թվականին Կոտայքի մարզի **Աբովյան, Նոր Հաճըն, Չարենցավան** և **Հրազդան** քաղաքներում հասանելի է դարձել համապետական ծածկույթի **10 Գբ/վ** թողունակությամբ IP/MPLS ցանցը, որի ցանցային հանգույցները հագեցվել են ամերիկյան Juniper Networks-ի արտադրության գերժամանակակից սարքավորումներով: Դա հնարավորություն է ընձեռում շարժական կապի օպերատորներին, ինտերնետ ծառայություն մատուցողներին և կորպորատիվ հաճախորդներին տրամադրել IP տարանցման, ինտերնետ հասանելիության, տվյալների հաղորդման, վիրտուալ մասնավոր ցանցերի (VPN) և այլ որակյալ ծառայություններ:

2010-2011 թվականներին ընդլայնվել է Կոտայքի մարզի Նոր Արտամետի գյուղական համայնքի տարածքում գտնվող Արզնիի օդանավակայանի թռիչքուղին:

Տունը

Կոտայքի մարզում տարեց-տարի ընդլայնվել է բնակարանային ֆոնդը: Հանրապետության մարզերի քաղաքային համայնքներում բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսով Կոտայքը **երկրորդն է**՝ զիջելով

Քաղաքային բնակարանային ֆոնդը ՀՀ մարզերում, 2011թ. (հազ. քմ)



միայն Լոռու մարզին: 2011 թվականին Կոտայքի մարզի գյուղական համայնքներում բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը 2008 թվականի համեմատ **ավելացել է 10 տոկոսով**:

Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով Կոտայքի մարզում (քմ)



2011 թվականին Կոտայքի մարզի քաղաքային համայնքներում մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով 2007 թվականի համեմատ **ավելացել է 12 տոկոսով**:

2011 թվականին հանրապետության մարզերում բազմաբնակարան շենքերի բնակարանների ամենամեծ քանակը՝ մեկ հինգերորդից ավելին, Կոտայքի մարզում էր:

Բազմաբնակարան շենքերի բնակարանների մակերեսը մայրաքաղաք Երևանից և Լոռու մարզից հետո **ամենամեծը** Կոտայքում է:

Հայաստանի գյուղական համայնքներում բազմաբնակարան շենքերի բնակարանների թվով Կոտայքը զիջում է միայն Արմավիրի մարզին: Հայաստանի գյուղական համայնքներում բազմաբնակարան շենքերի բնակարանների ընդհանուր մակերեսի **մեկ քառորդից ավելին** Կոտայքի մարզում է:

Կոտայքի մասնաբաժինը ՀՀ մարզերում քաղաքային բնակելի տների և բազմաբնակարան շենքերի բնակարանների ընդհանուր ծավալում, 2011թ.



Կոտայքի մարզում տարեց-տարի նկատելիորեն **ակտիվացել է** անշարժ գույքի շուկան. 2010 թվականին Կոտայքի մարզում բազմաբնակարան շենքերի

բնակարանների առուվաճառքի **երկու անգամ ավելի** գործարք է կատարվել, քան 2000 թվականին:

2010 թվականին Կոտայքի մարզում բնակելի տների (առանձնատների) առուվաճառքի գործարքների թիվը 2001 թվականին կատարված գործարքների **եռապատիկն է**:

2010 թվականին Հայաստանում հողերի, այդ թվում՝ գյուղատնտեսական, առուվաճառքի գործարքների **ամենամեծն** թիվը Կոտայքի մարզում է: 2010 թվականին Կոտայքի մարզում հողերի առուվաճառքի գրեթե **նույնքան** գործարք է կատարվել, որքան հանրապետության **հինգ այլ մարզերում**՝ միասին:

Կոտայքի մարզում բնակարանների առուվաճառքի ակտիվությունն ընկավ

2010 թվականին հանրապետությունում հողերի առուվաճառքի գործարքների մեկ հինգերորդից ավելին կատարվել է Կոտայքում:

2008 թվականի ճգնաժամի հետևանքով, սակայն արդեն 2010 թվականին միտումը փոխվեց՝ շուկան կրկին ակտիվացավ, գործարքների թիվը ավելացավ: 2010 թվականին Կոտայքի մարզում բազմաբնակարան շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների թիվն **ավելի էր**, քան հանրապետության **որևէ մարզում**, ավելի, քան հանրապետության հինգ մարզերում միասին: 2010 թվականին հանրապետության մարզերում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների **մեկ հինգերորդը** կատարվել է Կոտայքում:

Անշարժ գույքի առուվաճառքի ծավալները Կոտայքի մարզում (միավոր)



Միայն 2010-2011 թվականներին Կոտայքի մարզում վերանորոգվել է ավելի քան **50 բազմաբնակարան շենք՝ Հրազդան, Աբովյան, Չարենցավան, Ծաղկաձոր** համայնքներում:

2010 թվականին Կոտայքի մարզում կատարվել է անշարժ գույքի առուվաճառքի երկու անգամ ավելի գործարք, քան 2002 թվականին:

2007-2011 թվականներին մաքրվել են մի շարք հեղեղատարների ու գետերի հուներն ու ամրացվել ափերը, այդ թվում՝ **Մարմարիկ գետի** ափապաշտպան հենապատերը **Մեղրաձոր** և **Հրազդան** համայնքներում, հեղեղատարները Կապուտան համայնքում:

2012-2014 թվականներին Հրազդան քաղաքի տարածքում կկառուցվի նոր ժամանակակից **աղբավայր**, որի համար Հայաստանի Հանրապետությունը կապահովի շուրջ **7 միլիոն եվրո** ծավալով ներդրում:

Աշխատանքը

Կոտայքի մարզում 2010 թվականին աշխատողների միջին աշխատավարձը կազմել է շուրջ **95 հազար դրամ**, աշխատողների միջին աշխատավարձի ցուցանիշով Կոտայքը հանրապետության լավագույն երեք մարզերի թվում է:

Կոտայքի մարզում արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության և ծառայությունների ոլորտներում տարբեր ճյուղերի զարգացմա-

2010 թվականին Կոտայքի մարզում աշխատողների միջին աշխատավարձը 2001 թվականի համեմատ գրեթե քառապատկվել է, 2004 թվականի համեմատ՝ կրկնապատկվել, իսկ 2006 թվականի համեմատ՝ ավելացել է մեկուկես անգամ:

Աշխատողների միջին ամսական անվանական աշ-
խատավարձը Կոտայքի մարզում (դրամ)



նը զուգընթաց տարեց-տարի **նվազել է գործազրկությունը, ավելացել են աշխատատեղեր**, բարձրացել է աշխատանքի արտադրողականությունը: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով 2008-2009 թվականներին գործազրկության մակարդակը Կոտայքում բարձրացել էր, սակայն արդեն 2010 թվականից սկսած, ճգնաժամի հետևանքների հաղթահարմանն ու տնտեսության վերականգնմանը զուգընթաց գործազրկությունը Կոտայքի մարզում ընկրկում է:

2010 թվականին Կոտայքի մարզում ծառայությունների ոլորտում աշխատում էր զբաղվածների ավելի քան մեկ երրորդը. հանրապետության մարզերում ծա-

Զբաղվածությունը Կոտայքի մարզում՝ ըստ ոլորտների, 2011թ.



ռայությունների ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռն **ամենաբարձրը** Կոտայքի մարզում է:

Եթե Հայաստանում շինարարության ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռը շուրջ հինգ տոկոս է, ապա Կոտայքում՝ **տասը տոկոս՝ ամենաբարձրը** հանրապետությունում:

2010 թվականին Կոտայքի մարզում գյուղատնտեսության ոլորտում աշխատում են բոլոր զբաղվածների շուրջ 37 տոկոսը՝ գյուղատնտեսության մեջ զբաղվածության ամենացածր տեսակարար կշիռը հանրապետության մարզերում:

Փոխարենը արդյունաբերության մեջ զբաղվածների ամենամեծ տեսակարար կշիռը Հայաստանի Հանրապետությունում Կոտայքի մարզում է. 2010 թվականին արդյունաբերության ոլորտում էր աշխատում Կոտայքի մարզի բոլոր զբաղվածների շուրջ մեկ հինգերորդը, այն դեպքում, երբ հանրապետությունում բոլոր զբաղվածների միայն տասը տոկոսն է զբաղված արդյունաբերությունում, իսկ Երևանում՝ մեկ վեցերորդը միայն:

Կոտայքի մարզում տնտեսության տարբեր ոլորտներում զբաղվածության համամասնությունն ամենահավասարակշռվածն է հանրապետությունում:

«Գանգրահեր տղան» արձանը
Չարենցավան քաղաքի մուտքի մոտ

Կրթությունը

Կոտայքի մարզի գյուղական համայնքներում տարեց-տարի **ավելացել է** նախադպրոցական հաստատությունների թիվը. 2010 թվականին Կոտայքում գործում էր **մեկ երրորդով ավելի** նախադպրոցական հաստատություն, քան 2005 թվականին:

2010 թվականին հանրապետության մարզերի նախադպրոցական հաստատություններում տեղերի 15 տոկոսը Կոտայքում էր:

Տեղերի քանակը Կոտայքի նախադպրոցական հաստատություններում (միավոր)



Կոտայքի մարզում աստիճանաբար ավելացել է տեղերի քանակը նախադպրոցական հաստատություններում. 2010 թվականին Կոտայքի մարզի նախադպրոցական հաստատություններում տեղերի քանակը գրեթե **մեկուկես անգամ ավելի էր**, քան 2007 թվականին:

2010 թվականին Կոտայքի մարզի համայնքներում նախադպրոցական հաս-

Հանրապետության մարզերում նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների ամենամեծ թվաքանակը Կոտայքի մարզում է:

տատություն է հաճախել շուրջ **5,200 երեխա.** հանրապետության մարզերում նախադպրոցական հաստատություն հաճախող **յուրաքանչյուր վեցերորդ** երեխա կոտայքցի է: Կոտայքի մարզում նախադպրոցական հաստատություն հաճախող երեխաների թիվը տարեց տարի զգալիորեն ավելացել է. 2010 թվականին Կոտայքում նախադպրոցական հաստատություն հաճախող երեխաների թիվը 2007 թվականի համեմատ ավելացել է **մեկ երրորդով**, իսկ 2000 թվականի համեմատ՝ **80 տոկոսով**: Կոտայքի մարզի գյուղական համայնքներում նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թիվը 2010 թվականին 2006 թվականի համեմատ **ավելացել է 80 տոկոսով**, իսկ քաղաքային համայնքներում՝ նրանց թիվը նույն ժամանակահատվածում **կրկնապատկվել է**:

Կոտայքի նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թվաքանակը, 2010թ. (միավոր)



Ձորաղբյուրի նորաբաց մանկապարտեզը

Հանրապետության մարզերի նախադպրոցական հաստատությունների մանկավարժների ամենամեծ թվաքանակը Կոտայքում է:

2010 թվականին Կոտայքի մարզի համայնքներում նախադպրոցական հաստատություններում աշխատել է 560 մանկավարժ. հանրապետության մարզերում նախադպրոցական հաստատություններում յուրաքանչյուր վեցերորդ մանկավարժ աշխատում է Կոտայքում: 2010 թվականին Կոտայքի մարզում նախադպրոցական հաստատություններում աշխատում էր **մեկուկես անգամ ավելի շատ մանկավարժ**, քան 2007 թվականին և երկու երրորդով ավելի, քան 2003 թվականին:

Կոտայքի մասնաբաժինը ՀՀ մարզերի նախադպրոցական հաստատությունների մանկավարժների թվում, 2010թ.



Հանրապետության մարզերում մեկ նախադպրոցական հաստատություն հաճախող երեխաների ամենամեծ թիվը Կոտայքում է: 2010 թվականին Կոտայքի մարզի մեկ նախադպրոցական հաստատություն հաճախում էր նույնքան երեխա, որքան Երևան քաղաքում 2000 թվականին: Կոտայքի մարզում նախադպրոցական հաստատություններում 100 տեղին բաժին ընկնող երեխաների թվաքանակն **ամենաբարձրն է** հանրապետությունում. 100 տեղին՝ ավելի քան 111 երեխա, ինչը մատնանշում է մարզի համայնքներում նախադպրոցական հաստատությունների ցանցի ընդլայնման անհրաժեշտությունը: Միաժամանակ, Կոտայքի մարզի նախադպրոցական հաստատություններում մեկ մանկավար-

ժին բաժին ընկնող երեխաների թվաքանակը գրեթե մեկ հինգերորդով պակաս է, քան միջինում հանրապետությունում և գրեթե մեկուկես անգամ պակաս, քան մայրաքաղաք Երևանում: Այս փաստը վկայում է Կոտայքի նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների խնամքի պատշաճ մակարդակի մասին:

Կոտայքի մարզում **ավելացել է** երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների թիվը. եթե 2001/2002 ուսումնական տարում Կոտայքի մարզում գործում էր երաժշտական, արվեստի և գեղարվեստի 13 դպրոց, ապա տասը տարի անց՝ 2010/2011 ուսումնական տարում՝ **24-ը**: 2010/2011 ուսումնական տարում հանրապետության մարզերում ամենամեծ թվով երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ գործել են Կոտայքում՝ Շիրակից հետո:

Աշակերտների թվաքանակը Կոտայքի մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում, (մարդ)



2010/2011 ուսումնական տարում Կոտայքի մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում սովորողների թիվն ամենամեծն է հանրապետության մարզերում:

Հանրապետության մարզերում երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում յուրաքանչյուր վեցերորդ սովորող կոտայքցի է: 2010/2011 թվականներին Կոտայքի մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցնե-

ում կար **ավելի շատ սովորող**, քան հանրապետության մի շարք մարզերում միասին: 2010/2011 թվականներին Կոտայքի մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում սովորում էր ավելի շատ երեխա, քան Հայաստանի Հանրապետության մարզերի դպրոցներում երբևէ: Կոտայքի մարզում երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում սովորողների բացարձակ մեծամասնությունը՝ գրեթե 90 տոկոսը, ընդգրկված է ուսուցման վճարովի համակարգում, ինչը վկայում է թե՛ մարզում կենսամակարդակի աստիճանական բարձրացման, թե՛ կրթության հանդեպ կոտայքցիների առնաձնահատուկ վերաբերմունքի մասին:

2010 թվականին արհեստագործական ուսումնական հաստատությունների ուսանողների քանակը Կոտայքի մարզում 2008 թվականի համեմատ ավելացել է մեկ հինգերորդով:

Կոտայքի մարզում **ավելացել է** նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների և դրանցում ուսանողների թվաքանակը: 2010 թվականին Կոտայքը Հայաստանում արհեստագործական ուսումնական հաստատությունների ուսանողների թվաքանակով **երրորդն էր**՝ զիջելով միայն մայրաքաղաք Երևանին և Շիրակի մարզին:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների թվաքանակը Կոտայքի մարզում (մարդ)



Կոտայքը հանրապետության մարզերի թվում միայն Շիրակին է զիջում նաև արհեստագործական ուսումնական հաստատությունների մանկավարժների թվով:

Կոտայքի մարզում տարեց-տարի **ավելացել է** բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների թիվը. 2010/2011 ուսումնական տարում Կոտայքի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում էր գրեթե երեք անգամ ավելի ուսանող, քան 2003/2004 ուսումնական տարում:

2007-2011 թվականներին Կոտայքի մարզում իրականացված կապիտալ ծրագրերի մեկ քառորդն ուղղվել է կրթական հաստատությունների կառուցմանը, հիմնանորոգմանն ու արդիականացմանը. նշված ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերով Կոտայքի մարզի վեց քաղաքային և 36 գյուղական համայնքներում նախագծվել ու կառուցվել, հիմնանորոգվել ու ջեռուցման համակարգերով վերազինվել, կահավորվել ու արդիականացվել է 105 կրթական հաստատություն:

Կոտայքի մարզում 2007-2011թթ. իրականացված կապիտալ ծախսերի ընդհանուր ծավալում կրթական ոլորտին ուղղված ծախսերի բաժինը



2007-2011 թվականներին Հայաստանի մարզերում նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգմանն ու արդիականացմանն ուղղված կապիտալ ներդրումների մեկ վեցերորդն ուղղվել է Կոտայքի մարզ. **Գառնի**, **Գեղադիր**,

Արզնի, Ակունք, Նոր Երզնկա, Եղվարդ, Սոլակ, Զովունի, Քանաքեռավան, Նոր Գեղի, Ալափարս, Չարենցավան, Բյուրեղավան համայնքներում հիմնանորոգվել են նախադպրոցական հաստատություններ: **Լեռնանիստ** համայնքում նախագծվել և կառուցվելու է նոր մանկապարտեզ:

2010 թվականին **Ձորաղբյուր** համայնքում բացվել է 80 երեխայի համար նախատեսված նորակառույց, ամբողջությամբ կահավորված մանկապարտեզը, իսկ **Բյուրեղավան** քաղաքում ավագ դպրոցի մեկ մասնաշենք հատկացվել է համայնքին՝ նախադպրոցական կրթություն կազմակերպելու նպատակով:

Կոտայքի մարզի **Հատիս, Ջրաբեր, Ակունք, Թեղենիք, Բուժական, Առինջ, Ձորավան, Նուռնուս, Կամարիս, Զովունի, Արգել, Լեռնանիստ, Քարաշամբ, Վերին Պտղնի, Ալափարս, Ֆանտան, Մայակովսկի, Մարմարիկ, Ձորաղբյուր, Գառնի, Մրգաշեն, Ջրվեժ, Արզնի, Պտղնի, Մեղրաձոր, Նոր Գեղի, Գողթ, Արզական, Քասախ** համայնքներում հիմնանորոգվել են հանրակրթական դպրոցներ:

Քասախ համայնքում կառուցվել է նոր՝ թիվ 2 դպրոցը, **Հրազդան** քաղաքում՝ թիվ 5 հանրակրթական դպրոցի նոր մասնաշենքը: **Բալահովիտ** համայնքում նախագծվել և կառուցվել է դպրոցի ջեռուցման տեղային համակարգ: **Բյուրեղավան** քաղաքում հիմնանորոգվել են թիվ 1 միջնակարգ դպրոցը և որբ, ծնողազուրկ, խնամքից զրկված երեխաների հատուկ դպրոցը:

Գողթի վերանորոգված դպրոցի սպորտդահլիճն ու համակարգչային դասարանը

Հրազդանի թիվ 12 հիմնական դպրոցը

Նոր Հաճն քաղաքային համայնքում հիմնանորոգվել է երկու, **Եղվարդ** քաղաքում՝ երեք, **Չարենցավանում**՝ հինգ, **Հրազդանում**՝ հինգ, **Աբովյան** քաղաքում՝ յոթ դպրոց: Հիմնանորոգվել են **Հրազդանի արհեստագործական ուսումնարանը**, **Հրազդանի պետական քոլեջը**, **Աբովյանի թիվ 1 արհեստագործական ուսումնարանը**, **Աբովյանի կրթահամալիրը**, **Աբովյանի ճարտարագիտական քոլեջը**, **Աբովյանի էներգետիկական քոլեջը**, **Աբովյանի մտավոր թերզարգացած երեխաների դպրոցը**: **Հրազդան, Աբովյան** քաղաքներում և **Քանաքեռավան, Բալահովիտ, Զորավան, Մարմարիկ** համայնքներում վերակառուցվել են դպրոցների ջեռուցման համակարգերը, **Չարենցվան**, **Նոր Հաճն** և **Աբովյան** համայնքներում կահավորվել են դպրոցներ:

2012 թվականի տարեսկզբին Կոտայքի մարզում տեղային ջեռուցմամբ ապահովված էր ավելի քան **75 դպրոց**. 2012 թվականի տարեսկզբին Կոտայքի մարզի քաղաքային համայնքների բոլոր դպրոցներն ապահովվել են ջեռուցման տեղային համակարգով:

Քանաքեռավան համայնքում հիմնանորոգվել, գազաֆիկացվել ու ջեռուցման տեղային համակարգով վերազինվել, կահավորվել ու արդիականացվել է **«Փոքր Միեր»** կրթահամալիրը, որն, իրավամբ, Կոտայքի մարզի հպարտությունն է, կառուցվել է ռազմամարզական ուսումնական կենտրոն: Կրթահամալիրում, ի լրումն ուսուցման հանրակրթական ծրագրերի, իրականացվում են նաև նախազորակոչային, առաջին օգնության, արտակարգ իրավիճակներում գոյատևման, արտակարգ դրություններում գործելակերպի, ռազմարվեստի պատմության,

Աբովյանի շախմատի դպրոցում

Աբովյան քաղաքի շախմատի դպրոցի սաներից շատերի համար խոստումնալից ապագա են գուշակում նրանց մարզիչները: Դպրոցից դեռ Հայաստանի առաջնության չեմպիոններ չունեն: Աբովյանի շախմատի դպրոցում առայժմ պարծենում են մարզի մասշտաբով անցկացվող մրցումներում տարբեր տարիքային խմբերում տարած հաղթանակների քանակով: 15-ամյա Էդուարդ Մկրտչյանը Աբովյանի շախմատի դպրոց հաճախել է տասը տարեկանից: Շախմատի կախարդական աշխարհ մուտք է գործել բավական փոքր տարիքից: Ընդամենը չորս տարեկան էր, երբ հայրը որոշեց նստեցնել տախտակի առաջ ու ծանոթացնել իմաստուն խաղի գաղտնիքներին:

«2007 թվականին, երբ Աբովյանում շախմատի դպրոցը բացվեց, որոշեցի անպայման գալ ու հիմա վստահ եմ, որ ճիշտ ուղով եմ գնում: Շախմատ շատ եմ սիրում, դպրոցն էլ շատ գիտելիքներ է տալիս: Ես ամենաշատը Լևոն Արոնյանին և Գարի Կասպարովին եմ սիրում, իրենք են իմ կուռքերը: Երազում եմ միջազգային մրցաշարերի հաղթող լինել, որ իմ քաղաքում էլ պարծենան ինձնով, ինչպես Լևոն Արոնյանով են պարծենում ծննդավայրում: Ավագ դպրոցն ավարտելուց հետո Երևանի տնտեսագիտական համալսարան եմ տալու գործերս: Կշարունակեմ նաև շախմատի իմ պարապմունքները»:

«Փոքր Մհեր» կրթահամալիրի սաները

էթիկայի, ճանապարհային երթևեկության կանոնների, ինքնապաշտպանության ծրագրեր: Գիտելիքների ամրապնդման նպատակով կրթահամալիրը կազմակերպում է ռազմամարզական խաղեր, արշավներ, մրցումներ, դաշտային պարապմունքներ, համերգներ: Կրթահամալիրում գործում են դաշնամուրի, նկարչության, բնապահպանական խմբակներ, երգչախումբ: Սաների բժշկական սպասարկումն ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ հանրային միջոցներով: Դպրոցը սաներին ապահովում է նաև առողջ սնունդ և հագուստ: 2005-2009 թվականների ընթացքում կրթահամալիրի շուրջ 110 շրջանավարտների **կեսն ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություններ**: Կրթահամալիրին է միացվել Նուբարաշենի թիվ 18 հատուկ դպրոցը: 2011 թվականին կրթահամալիրում սովորում էր 265 երեխա. սաների

«Ինձ այստեղ ամեն ինչն էլ դուր է գալիս, բայց հատկապես՝ մեր առօրյան... Ոնց ասեմ, ոնց որ սա մեր երկրորդ տունը դարձած լինի»:

Հայկազուն Գանջարյան, Փոքր Մհեր կրթահամալիրի սան

մեկ հինգերորդը որբ և ծնողազուրկ երեխաներ են: 2012 թվականին դպրոցը դռները կբացի առաջին դասարանցիների առջև, կընդունվեն նաև աղջիկներ:

Կոտայքի մարզի բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններն ապահովված են համակարգիչներով և ինտերնետ կապով, ունեն տարբեր առարկաների էլեկտրոնային ձեռնարկներ, որոնց հիման վրա դպրոցների մեծ մասում ստեղծվել են նաև էլեկտրոնային գրադարաններ:

Կոտայքի մարզում ուսումնական զենքի պահպանման սենյակ ունեն **90-ից ավելի դպրոցներ**, շուրջ 85 դպրոց համալրվել է ուսումնական զենքով: Կոտայքի մարզում բոլոր միջնակարգ ու հիմնական դպրոցներին տրամադրվել է շախմատի դասավանդման համար անհրաժեշտ գույք՝ սեղաններ, աթոռներ, շախմատի խաղաքարեր և դաշտեր: Միայն 2011 թվականին մարզի շուրջ քսան դպրոցների տրամադրվել է «Քիմիա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն» առարկաների լաբորատոր սարքավորումներ:

Կոտայքի մարզում **վերապատրաստվել են** ավագ դպրոցներում դասավանդող 150 ուսուցիչներ և շուրջ 950 մանկավարժներ: Միայն 2011 թվականին վերապատրաստվել են մարզի հանրակրթական դպրոցներում աշխատող ուսուցիչների շուրջ մեկ հինգերորդը:

2009-2010 ուսումնական տարում դպրոցն ավարտած շուրջ 3,350 շրջանավարտներից **1,250-ն ընդունվել է** բարձրագույն ուսումնական հաստատություններ: Միայն 2011 թվականին բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված Կոտայքի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների թիվն **ավելացել է** 15 տոկոսով:

2010 թվականին Ծաղկաձորի գրողների միության տանը կազմակերպվել է **նանոֆոտոնիկայի և ն՝անովոլտայիկայի 2-րդ միջազգային դպրոցը՝** տասներկու երկրների շուրջ 80 առաջատար մասնագետների և ասպիրանտների մասնակցությամբ:

2012 թվականին Ծաղկաձոր քաղաքում բացվել է ձմեռային դպրոց՝ Հայաստանից և Վրաստանից շուրջ 100 ուսանողների, ասպիրանտների, երիտասարդ գիտնականների մասնակցությամբ:

Առողջապահությունը

Կոտայքի մարզում, 2003 թվականից սկսած, **ավելացել է** ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների քանակը՝ 2010 թվականին կազմելով 44:

Տարեց-տարի Կոտայքի մարզում **ավելացել է** ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ հաճախումների քանակը. 2010 թվականին Կոտայքի մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում հաճախումների քանակը 2006 թվականի համեմատ **ավելացել է մեկ հինգերորդով**: 2001 թվականի համեմատ, 2010 թվականին կոտայքի մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում հաճախումների քանակը **կրկնակի** ավելացել է:

2007-2011 թվականներին Կոտայքի մարզի **հինգ քաղաքային** և **տասը գյուղական** համայնքներում հիմնանորոգվել և կառուցվել են առողջապահական հաստատություններ, մի շարք բուժհաստատություններում կառուցվել են ջեռուցման տեղային համակարգեր:

Մասնավորապես, 2007 թվականին **Պռոշյան** համայնքում բացվել է վերանորոգված և տեխնիկապես հագեցված առողջության առաջնային պահպանման կենտրոնը: 2009 թվականին ամբողջությամբ հիմնանորոգվել և արդիականացվել է Հրազդան քաղաքի բժշկական կենտրոնը: 2010 -2011 թվականներին վերանորոգվել են **Բյուրեղավանի** քաղաքային պոլիկլինիկան, **Աբովյանի** և **Նաիրիի** բժշկական կենտրոնները, **Աբովյանի** ծննդատան մանկաբարձական բաժինը՝ նախածննդյան և հետծննդյան պալատները, ծննդաբերական և վիրահատական բլոկները՝ վիրահատական սրահը, հետվիրահատական բուժ-

Հրազդանի բժշկական կենտրոնը զինվել է ամենաժամանակակից սարքավորումներով

ման պալատները, **Չարենցավանի** բժշկական կենտրոնի մանկաբարձագինեկոլոգիական բաժինը, ինտենսիվ թերապիայի հատվածը: 2010 թվականին շահագործման է հանձնվել **Բուժականի** և հիմնանորոգվել է **Արզնիի** բժշկական ամբուլատորիայի շենքը:

2011 թվականին Կոտայքի մարզի հինգ բժշկական հաստատությունների՝ **Աբովյանի, Հրազդանի, Չարենցավանի, Նաիրիի** և **Նոր Հաճընի** բժշկական կենտրոններին տրամադրվել է **6 շտապ օգնության մեքենա**:

Կոտայքի մարզի մի շարք քաղաքային, գյուղական համայնքներում կահավորվել են բժշկական կենտրոններն ու առողջության առաջնային պահպանման հաստատությունները, տրամադրվել են սառնարաններ և բժշկական այլ պարագաներ, **Բուժականի** բժշկական ամբուլատորիային տրամարդվել է բիոքիմիական վերլուծիչ սարքավորում, Քասախի առողջության առաջնային պահպանման կենտրոնին՝ **շարժական սոնոգրաֆ**:

Տարեց-տարի ավելի մեծ ուշադրություն է հատկացվել կոտայքցիների տեսողական խնդիրների ախտորոշմանն ու բուժմանը: Այսպես, 2007 թվականին **Չարենցավան** քաղաքում շուրջ **160 մեծահասակ** և **350 երեխա** ակնային զննումներ են անցել, իսկ 90 հիվանդներ ուղղորդվել են **«Աչքի շարժական հիվանդանոց»**՝ աչքի մանրակրկիտ հետազննման: Ավելի քան 70 կարիքավորի տրամադրվել է ակնոց, իսկ շուրջ երեք տասնյակը՝ վիրահատվել է: 2011 թվականին Կոտայքի մարզում իրականացվել է աչքի ավելի քան 260 վիրահատություն, որից ավելի քան 230-ը՝ արհեստական ոսպնյակի տեղադրումով, հետազոտվել է շուրջ չորս հազար կոտայքցի, տրամադրվել է ավելի քան 1300 ակնոց:

Անահիտ Ոսկանյանը Սոլակ գյուղից է: Գանգատներ ունի սրտի աշխատանքից ու, ինչպես ինքն է խոստովանում, հաճախակի է «թակում» հիվանդանոցի դուռը: Տիկին Անահիտը լավ է հիշում Հրազդանի բժշկական կենտրոնի նախկին շենքը, որը համեմատության եզր չունի ներկայի հետ: «Ախր ինչն համեմատեմ, եթե համեմատելու բան չկա,— ասում է Անահիտ Ոսկանյանը,— հիմա հիվանդասենյակներում անգամ հեռուստացույց կա դրված, որ մարդ չձանձրանա, որ հիվանդն ավելի չնեղվի իրա հիվանդությունից, ուզում եմ ասել, զբաղմունք ունենք: Սեղան-աթոռ կա, որ նախկինում չկար: Առաջ հիվանդը պիտի ստիպված տեղաշորի մեջ նստած հացն ուտեր, հիմա կարող ենք հանգիստ նստել-ճաշել: Տուալետի համար միջանցք դուրս չենք գալիս, ջեռուցումն էլ է լավ: Մեկ-մեկ գիշերներն էնքան ենք շոգում, որ ուզում ես թե պատուհանը բաց անես: Մաքրությունն իրա տեղին, սարքավորումներն իրա տեղին: Էն ինչ ունեինք մի 20 տարի առաջ ու հիմի ունենք, դժվար համեմատելու բաներ են: Լավ կլիներ, որ ամեն մի գյուղ ու քաղաք ըսենց հիվանդանոց ունենար»:

Մշակույթն ու սպորտը

Կոտայքի մարզում 2009 թվականից գործում է պետական մասնագիտացված թատրոն:

Թանգարանային ցուցադրությունների քանակով Կոտայքը հանրապետության մարզերի **լավագույն եռյակում է**: Հատկանշական է, որ ֆինանսա-

2010 թվականին ցուցադրությունների քանակը Կոտայքի մարզում գործող թանգարաններում 2008 թվականի համեմատ քառապատկվել է:

տնտեսական ճգնաժամի բացասական անդրադարձը զգալի էր նաև մշակույթի ոլորտում. 2008 թվականին կտրուկ նվազեց Կոտայքի թանգարաններում այցելուների թիվը, որը մինչ այդ աստիճանականորեն ավելանում էր: Այդուհանդերձ, հետագա տարիներին այցելուների թիվը կրկին աճեց՝ հասնելով նախաճգնաժամային տարիների մակարդակին: 2010 թվականին Կոտայքի մարզում թանգարանների այցելուների թիվը 2008 թվականի համեմատ **ավելի էր շուրջ 80 տոկոսով:**

2010 թվականին Կոտայքի մարզում գործող մարզական կազմակերպությունների թիվը 2007 թվականի համեմատ **ավելացել է մեկուկես անգամ**: Կոտայքի մարզական կազմակերպություններում 2010 թվականին գործող խմբերի թիվը

Ցուցադրումների քանակը Կոտայքի մարզի թանգարաններում (միավոր)



2004 թվականի համեմատ **ավելացել է 40 տոկոսով**: 2010 թվականին հանրապետության գյուղական համայնքներում գործող մարզական կազմակերպությունների ամենամեծ թվաքանակի խմբերը Կոտայքում էին: 2010 թվականին հանրապետության գյուղական համայնքներում գործող մարզական կազմակերպությունների խմբերի **մեկ քառորդը** Կոտայքում էր:

2010 թվականին Կոտայքի մարզի գյուղական համայնքներում գործող խմբերի քանակը 2008 թվականին գործող խմբերի քանակի կրկնապատիկն է, իսկ 2004 թվականին գործող խմբերի քանակի՝ վեցապատիկը:

Կոտայքի մարզի գյուղական վայրերում գործող մարզական կազմակերպությունների քանակը (միավոր)



2010 թվականին Կոտայքի գյուղական համայնքներում կար **երկու անգամ ավելի** մարզիկ, քան 2008 թվականին և **տասնմեկապատիկ** ավելի, քան 2004 թվականին: 2010 թվականին հանրապետության գյուղական համայնքների մարզիկների շուրջ **մեկ հինգերորդը** Կոտայքի մարզում էր:

2010 թվականին Կոտայքի մարզում էին հանրապետության գյուղական համայնքներում ամենամեծ թվով մարզիկները:

Մարզիկների թվաքանակը կոտայքի մարզի գյուղական համայնքներում (միավոր)



Կոտայքի մարզի մասնաբաժինը ՀՀ մարզերի գյուղական համայնքներում գործող մարզիկների թվաքանակում, 2010թ.



2007-2011 թվականներին Կոտայքի մարզի **վեց քաղաքային** և **17 գյուղական** համայնքներում կառուցվել և հիմնանորոգվել են մշակութային հաստատություններ:

Հիմնանորոգվել են Կոտայքի մարզային գրադարանը **Հրազդանում**, Հայ և Ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանն **Աբովյան** քաղաքում, Օրբելի եղբայրների թանգարանը **Ծաղկաձորում**, արվեստի դպրոցն ու մարզամշակութային կենտրոնը **Եղվարդում**, մշակույթի տները **Չարենցավան**, **Նոր Երզնկա, Պռոշյան, Արգելի, Մրգաշեն, Նոր Հաճն, Քարաշամբ, Քասախ** հա-

Չարենցավանի վերանորոգված մշակույթի տունը

մայնքներում, համայնքային կենտրոններ՝ **Առինջ** և **Նոր Գեղի** համայնքներում: Կառուցվել է Զովք գյուղի սպորտի և մշակույթի տունը:

2007-2011 թվականներին նորոգվել են **Ալափարսի Սուրբ Հովհաննես եկեղեցին**, **Թեղենյաց վանքը**, **Բջ-նո** ամրոցը: 2007 թվականին վերաօծվել է Ակունք գյուղի **Սուրբ Կարապետ եկեղեցին**: 2010 թվականին օծվել են Աբովյան քաղաքի հիմնանորոգված **Սուրբ Ստեփանոս եկեղեցու** սուրբ սեղանը, մկրտության ավազանը, սրբապատկերները, Կոտայք գյուղում՝ վերանորոգված **Սուրբ Հովհաննես եկեղեցին**: 2008 թվականին, վերանորոգումից հետո, մեծ հանդիսությամբ վերաբացվել է Եղվարդ քաղաքի **Սուրբ Աստվածածին եկեղեցին**: 2011 թվականին **Նոր Գեղի** համայնքում կառուցվել է **նոր եկեղեցի**:

2007-2011 թվականների ընթացքում պետական ֆինանսավորմամբ համակարգչային տեխնիկա և սարքավորումներ է տրամադրվել Կոտայքի մարզային գրադարանին, **Գառզուի անվան արվեստի դպրոցին**, համայնքային գրադարանին և երաժշտական դպրոցին՝ **Չարենցավան** քաղաքում:

Մարզի ներկայացուցիչները հաջողությամբ մասնակցել են Գյումրիում կայացած **«Երաժիշտ կատարողների միջազգային երկրորդ մրցույթ-փառատոնին»**՝ արժանանալով **հինգ առաջին կարգի դիպլոմի** և մի շարք խրախուսական մրցանակների, իսկ Լեհաստանի Հանրապետության Տորուն քաղաքում կայացած կերպարվեստի միջազգային մանկական ավանդական մրցույթին՝ **4 պատվոգրի**:

2011 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրենի որոշմամբ և միջազգային մրցանակաբաշխության հանձ-

նաժողովի եզրակացության հիման վրա Հայաստանի **«Գառնի»** պատմամշակութային արգելոց-թանգարանը ստացավ **ՅՈՒՆԵՍԿՕ-ՀՈՒՆԱՍՏԱՆ-2011 Մելինա Մերկուրի** հեղինակավոր մրցանակը: Միջազգային մրցանակը շնորհվում է երկու տարին մեկ այն անհատին կամ կազմակերպություններին, որոնք նշանավոր ավանդ ունեն մշակութային լանդշաֆտի պահպանման և կառավարման բնագավառում:

2008 թվականին **Սուրբ Գեղարդ վանքի** երգչախումբը Ստրասբուրգում մասնակցել է միջնադարյան երաժշտության ամենամյա փառատոնին:

2007-2011 թվականներին հանրապետության մարզերում մարզական հաստատությունների զարգացմանն ուղղված կապիտալ միջոցների ավելի քան մեկ երրորդն ուղղվել է Կոտայքի մարզ. հիմնանորոգվել են **Գառնի, Արգել, Մրգաշեն, Քանաքեռավան** համայնքների մարզադպրոցները, **Հրազդանի** շախմատի և մականախաղի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցները: Նոր մարզադպրոցներ են կառուցվել **Չարենցավան** և **Եղվարդ** քաղաքներում: Կառուցվել և կահավորվել են **Աբովյան** քաղաքի մարզահամալիրն ու շախմատի դպրոցը:

Չարենցավան քաղաքը 2010 թվականին ճանաչվել է հանրապետության **«Լավագույն քաղաքային մարզական համայնք»**:

Գեղարդի վանական համալիրը, XIII դար

«Հայ նվիրյալների» նորաբաց հուշարձանը Չարենցավանում

Սոցիալական վիճակը

Կոտայքի մարզում, 2002 թվականից սկսած, աստիճանականորեն նվազել է կենսաթոշակառուների տեսակարար կշիռը բնակչության կազմում. եթե 2003 թվականին հազար բնակչի հաշվով Կոտայքում կար 148-ից ավելի կենսաթոշակառու, այսինքն գրեթե յուրաքանչյուր վեցերորդ կոտայքցի կենսաթոշակառու էր, ապա 2010 թվականին կենսաթոշակառու էր արդեն յուրաքանչյուր յոթերորդ կոտայքցին՝ հազար բնակչի հաշվով շուրջ 139 հոգի: 2010 թվականին Կոտայքի մարզում կենսաթոշակառուների թիվը հազար բնակչի հաշվով 15 տոկոսով ավելի պակաս էր, քան միջինը հանրապետությունում:

Կոտայքի մարզում տնտեսության զարգացմանն ու բարեկեցության աճին համահունչ տարեցտարի **նվազել է** նպաստառու ընտանիքների թիվը՝ ընդհուպ մինչև ճգնաժամային 2008 թվականը, սակայն, արդեն 2009 թվականից սկսած, մարզում ճգնաժամի հետևանքների ու աղքատության հաղթահարմանը զուգընթաց նպաստառու ընտանիքների թիվը Կոտայքում նվազել է. 2010 թվականին Կոտայքում **տասը տոկոսով պակաս** նպաստառու ընտանիք կար, քան նախաճգնաժամային 2007 թվականին:

2006-2011 թվականներին, ԽՍՀՄ բանկերում ունեցած ավանդների դիմաց փոխհատուցում է տրվել **ավելի քան 2,330** կոտայքցու, այդ թվում՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի 250 վետերանների:

2006-2011 թվականներին բնակարանի գնման վկայագիր է տրամադրվել **ավելի քան 425 ընտանիքի**, բնակարան են ձեռք բերել շուրջ 320 ընտանիքներ:

2010-2011 թվականներին զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների կարիքավոր տաս ընտանիքի տրամադրվել է ավելի քան **85 միլիոն դրամ՝** բնակարանի կամ բնակարանային պայմանների բարելավման նպատակով: 1999-2011 թվականներին բնակարանային ապահովման նպատակով աջակցություն են ստացել Կոտայքի մարզի զոհված և հաշմանդամ դարձած զինծառայողների ավելի քան **200 անապահով ընտանիքներ**:

2010 և 2011 թվականներին Զոհված ազատամարտիկների և կարիքավոր կո-

տայքցի ընտանիքների 150-ական երեխաներ ամառային հանգիստն անցկացրել են **«Հեքիաթների կիրճ»** մանկապատանեկան ճամբարում:

2010-2011թթ. Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն է տեղավորվել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող սոցիալապես անապահով ընտանիքների **ավելի քան 40 երեխա**: Ավելի քան 40 երեխա դուրս է գրվել հաստատություններից: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման **«Մանուկ»** տեղեկատվական համակարգում 2010 թվականին մուտքագրվել էր ավելի քան 40, իսկ 2011 թվականին արդեն՝ ավելի քան **160 երեխայի տվյալ**:

2010-2011 թվականներին Կոտայքի մարզում աշխատանքի է տեղավորվել շուրջ **2,000 գործազուրկ**, այդ թվում՝ կեսից ավելին կանայք:

2010-2011 թվականներին Կոտայքի մարզի 30 համայնքներում իրականացվող 46 ծրագրերի շրջանակներում վարձատրվող հասարակական աշխատանքներում ներգրավվել և ժամանակավոր աշխատատեղերով ապահովվել է **շուրջ 500 մարդ**:

2009 թվականին Քասախ համայնքում կառուցվել և գործարկվել է **սոցիալական տունը**:

2007 թվականից ի վեր Կոտայքի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման պլանը, հողի և գույքի վարձակալական վճարների և տեղական տուրքերի գանձման առաջադրանքը կատարվել է **ավելի քան** 100 տոկոսով: Կոտայքի մարզի համայնքները և ենթակա հիմնարկները աշխատավարձի և սոցիալական վճարների գծով պարտքեր չունեն: Նշված ցուցանիշներով Կոտայքն առանձնանում է ՀՀ մյուս մարզերից:

Վանդությունն ասում է, որ հայոց ամենավեհ հերոսը՝ Արա Գեղեցիկ արքան, ում անունով կոչվում է Հայոց հեթանոսական տոմարի վեցերորդ ամիսը, այստեղ՝ Կոտայքի հողում իր կյանքով հաստատեց հայ մնալու խորհուրդը: Իր սերմին ու սիրուն հավատարիմ արքան, Արա լեռան ստորոտում անհուսալի մարտի ելավ օտարուհու ամեհի հրոսակների դեմ: Ելավ, որ մերժի իր զորությամբ օտարի զորությունը բազմապատկելու փորձությունը: Ելավ, որ իր ընտրությամբ մեկընդմիշտ փոխի սերունդների ճակատագիրը: Ելավ, որ ընկնի, սակայն ապրեցնի իր տեսակը: Ելավ անհույս, սակայն իր ընտրության ու իր սերնդի հարատևության հանդեպ մեծագույն հավատով:

Արա ու Շամիրամ լեռների ստորոտում թեժ մարտում ընկավ պատանի արքան: Ընկավ, որ ելնի՝ կրկին ու կրկին հիշեցնելով սերունդներին իր ընտրության խորհուրդը: Եվ սերունդներն անսացին արքայի ընտրության ձայնին, պաշտեցին իրենց առաջնորդին՝ որպես մեռնող ու հարություն առնող աստվածություն: Որպես պահապան հուռութք նրա անունը տվեցին լեռներին, ջրերին, շեներին ու իրենց զավակներին: Իր լեռը հայը կոչեց Արագած ու Արա, իր շենը՝ Արամուս ու Արզնի, ու իր զավակին՝ Արա: Կոչեց, որ եթե չարաբաստիկ մի օր մոռանա արքայի զոհողության խորհուրդը, որոշի լքել իր տունն ու մերժի այն, ինչը սիրել է՝ հանուն օտար հորիզոնների, հիշեցնեն լեռներն ու ջրերը ու զավակին ձայն տվող մոր կանչը հիշեցնի:

Կոտայքում լեռներն ու շեներն ամեն քայլափոխի հիշեցնում են պատանի արքային: Հիշեցնում են նաև մարդիկ ու նրանց գործերը: Հայոց գեղեցիկ Արան ընկնում է երկիրն ամեն լքողի ու ելնում՝ ամեն վերադարձողի հետ: Ընկնում է իր կարողությունն օտարին ծառայեցնող ամեն հայի հետ ու վերածնվում իր հողում՝ իր ձեռքով հայի տնկած ամեն շիվով: Եվ օտարի ոչ մի արալեզ չի կարող կենդանացնել նրան, այլ միայն ժառանգների հավատն առ հավերժ պատանի արքայի ընտրության ճշմարտացիությունը:

Սույն գրքույկը ներկայացնում է 2007-2011 թվականներին ՀՀ Կոտայքի մարզում առավել նկատելի ձեռքբերումները տնտեսության և ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության և մշակույթի, բնակարանային ապահովության և հասարակական անվտանգության բնագավառներում, որոնց արդյունքում բարելավվել է քաղաքացիների կենսամակարդակը: Գրքույկը ներկայացնում է նշված ժամանակահատվածում Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման համար խիստ բացասական հետևանքներ թողած համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի հաղթահարման ընթացքն ու արդյունքները: Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերն ու դրանց արդյունքները՝ ուղղված հանրային և մասնավոր հատվածների, հասարակական և բարեսիրական կառույցների, ինչպես նաև զարգացման միջազգային գործընկերների՝ ճգնաժամի պայմաններում սուղ միջոցների և մասնատված ուժերի համախմբանն ու արդյունավետ օգտագործմանը՝ ի շահ Կոտայքի մարզի տնտեսության և բնակիչների: Գրքույկի գլխավոր հերոսը կոտայքցին է, ում ստեղծագործ ուժն ու եռանդը, լավատեսությունը, դրական փոփոխությունների հանդեպ հավատն ու դրանց հասնելու վստահությունը հնարավոր են դարձրել այն բոլոր ձեռքբերումները, որոնք ներկայացված են գրքույկում:

Երևան - 2012